

3327

# Մ Տ Ա Լ Ի Ն

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈՒՈՒՑԻԱՆ  
ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ  
ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ

3K33

3-75

ՍՏԻՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ● 1940

05 AUG 2013

3327



1261  
41

И. СТАЛИН

ОКТАБРЕВСКАЯ РЕВОЛЮЦИЯ И  
ТАКТИКА РУССКИХ КОММУНИСТОВ

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1940

### ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ

«Հոկտեմբերի ուղիներում» գրքի առաջաբանը

#### I

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ ԱՐՏԱԿԻՆ ՈՒ  
ՆԵՐԿԻՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին կարգի երեք հանդամանքներ որոշեցին այն համեմատական հեշտությունը, որով պրոլետարական ռեվոլյուցիային Ռուսաստանում հաջողվեց փչրել խմպերիալիզմի շղթաները և, այդպիսով, տապալել բուրժուազիայի իշխանությունը:

Նախ՝ այն հանդամանքը, որ Հոկտեմբերյան ռեվոլյուցիան սկսվեց երկու հիմնական խմպերիալիստական խմբերի՝ անգլո-ֆրանսական և ավստրո-գերմանական խմբերի կատաղի կռվի ժամանակաշրջանում, երբ այդ խմբերը զբաղված լինելով իրար դեմ մահացու կռիվ մղելով, ո՛չ ժամանակ ունեին, ո՛չ էլ միջոցներ՝ լուրջ ուշադրություն նվիրելու Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի դեմ պայքարելուն: Այս հանդամանքը հսկայական նշանակություն ունեցավ Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի համար, որովհետև նա այդ ռեվոլյուցիային հնարավորություն տվեց օգտագործելու դաժան ընդհարումներն խմպերիալիզմի ներսում՝ իր ուժերն ամրացնելու և կազմակերպելու համար:

Երկրորդ՝ այն հանդամանքը, որ Հոկտեմբերյան ռեվոլյուցիան

լուցիան սկսեց իմպերիալիստական պատերազմի ընթաց-  
քում, երբ պատերազմից տանջված ու հաշտութեան ծարա-  
վի աշխատավոր մասսաներին իրերի բուն խկ տրամաբա-  
նութունը մոտեցրել էր պրոլետարական ռեւոլյուցիային,  
որպես պատերազմից դուրս գալու միակ ելքը: Այս հանդա-  
մանքն ամենալուրջ նշանակութուն ունեցավ Հոկտեմբե-  
րյան ռեւոլյուցիայի համար, որովհետեւ նրա ձեռքը հաշտու-  
թեան հուժկու գործիք տվեց, նրա համար հեշտացրեց սո-  
վետական հեղաշրջումն ատելի պատերազմի վախճանի հետ  
միացնելու հնարավորութունը և, դրա շնորհիվ, նրա հա-  
մար ստեղծեց մասսայական համակրանք ինչպես Արևմուտ-  
քում՝ բանվորների մեջ, այնպես էլ Արևելքում՝ ճնշված  
ժողովուրդների մեջ:

Երրորդ՝ բանվորական հուժկու շարժման առկայու-  
թյունը Եվրոպայում և ռեւոլյուցիոն կրիզիսի հասունանալու  
փաստն Արևմուտքում և Արևելքում, կրիզիս, որ ստեղծել  
էր իմպերիալիստական երկարատև պատերազմը: Այս հան-  
դամանքն անգնահատելի նշանակութուն ունեցավ ռեւոլյու-  
ցիայի համար Ռուսաստանում, որովհետեւ նրա Ռուսաստա-  
նից դուրս հավատարիմ դաշնակիցներ ապահովեց ռեւոլյու-  
ցիայի համար՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ  
ուղղված նրա պայքարում:

Բայց, բացի արտաքին կարգի հանդամանքներից, Հոկ-  
տեմբերյան ռեւոլյուցիան ուներ էլ մի ամբողջ շարք ներքին  
բարենպաստ պայմաններ, որոնք հեշտացրին նրա համար  
հաղթութունը:

Այդ պայմաններից գլխավորները պետք է համարել հե-  
տևյալները:

Նախ՝ Հոկտեմբերյան ռեւոլյուցիան իր կողմում ուներ  
Ռուսաստանի բանվոր դասակարգի հսկայական մեծամաս-  
նութեան ամենաակտիվ աջակցութունը:

Երկրորդ՝ նա վայելում էր անտարակուսելի աջակցու-  
թյունը գյուղացիական շքավորութեան ու գինվորների մե-  
ծամասնութեան, որոնք ծարավի էին հաշտութեան ու հողի:

Երրորդ՝ նրա գլուխ էր անցած, որպես ղեկավար ուժ,  
մի այնպիսի փորձված պարտիա, ինչպիսին բուլշևիկների  
պարտիան է, որն ուժեղ է ո՛չ միայն իր փորձով ու տա-  
րիներով մշակված կարգապահութեամբ, այլև աշխատավո-  
րական մասսաների հետ ունեցած ահագին կապերով:

Չորրորդ՝ Հոկտեմբերյան ռեւոլյուցիան իր առջև ուներ  
այնպիսի համեմատաբար հեշտ հաղթահարելի թշնամիներ,  
ինչպես են՝ այլևի կամ պակաս չափով թույլ ռուսական  
բուրժուազիան, գյուղացիական «բուհտերից» վերջնակա-  
նապես բարոյալքված՝ կալվածատերերի դասակարգը և  
պատերազմի ընթացքում բոլորովին սնանկացած համա-  
ձայնողական պարտիաները (մենչևիկների ու էսերների  
բարտիաները):

Հինգերորդ՝ նա իր տրամադրութեան տակ ուներ երի-  
տասարդ պետութեան ահագին տարածութունները, որ-  
տեղ կարող էր ազատորեն մանևրել, նահանջել, երբ իրա-  
դրութունն այդ էր պահանջում, դադար առնել, ուժերը  
հավաքել և այլն:

Վեցերորդ՝ կոնտրռեւոլյուցիայի դեմ մղած իր պայքա-  
րում Հոկտեմբերյան ռեւոլյուցիան կարող էր հուսալ, որ  
երկրի ներսում առկա են բավարար քանակով պարենավոր-  
ման, վառելիքի ու հումքի ռեսուրսներ:

Այս արտաքին ու ներքին հանդամանքների զուգակցու-  
թյունն ստեղծեց այն յուրահատուկ իրադրութունը, որը  
որոշեց Հոկտեմբերյան ռեւոլյուցիայի հաղթութեան համե-  
մատական հեշտութունը:

Այս չի նշանակում, իհարկե, որ Հոկտեմբերյան ռե-  
ւոլյուցիան չուներ իր միևնույնը՝ արտաքին ու ներքին իրա-  
դրութեան իմաստով: Ի՞նչ արժի, օրինակ, այնպիսի մի  
միևնուս, ինչպես Հոկտեմբերյան ռեւոլյուցիայի հայտնի մի-  
այնութունն է, նրա կողքին ու նրա հարևանութեամբ սո-  
վետական երկրի բացակայութունը, որի վրա նա կարողա-  
նար հենվել: Անտարակուսելի է, որ ապագա ռեւոլյուցիան,  
օրինակ՝ Գերմանիայում, այս տեսակետից այլևի նպաստա-

վոր դրուժյան մեջ կլինի, որովհետեւ նա իրեն հարեան  
ունի իր ուժով այնպիսի լուրջ մի սովետական երկիր, ինչ-  
պես մեր Սովետական Միութիւնն է: Էլ ես չեմ խոսում  
Հոկտեմբերյան ռեւոլյուցիայի այնպիսի մի նուստի մասին,  
ինչպես պրոլետարական մեծամասնութիւնն ըստ հակադրու-  
թիւնն է երկրում:

Բայց այս մի նուստները միայն ընդգծում են Հոկտեմբե-  
րյան ռեւոլյուցիայի ներքին ու արտաքին այն պայմանները  
յուրօրինակութեան հսկայական նշանակութիւնը, որոնց  
մասին վերը խոսելի է:

Այդ յուրօրինակութեան մասին ոչ մի բոլոր չի կարելի  
մոռանալ: Նրա մասին առանձնապէս հարկավոր է հիշել  
1923 թվի անշան գերմանական դեպքերը վերլուծելիս: Նրա  
մասին ամենից առաջ պետք է հիշել Տրոցկին, որն անհիմն  
կերպով անդրդրա է կատարում Հոկտեմբերյան ռեւոլյու-  
ցիայի ու Գերմանիայի ռեւոլյուցիայի միջև և անդուսպ կեր-  
պով խարազանում է գերմանական կոմպարտիային՝ նրա  
խակական ու կարծեցյալ սխալները համար:

«Ռուսաստանի համար, ասում է Լենինը,—1917 թվի կոնկրետ, պատ-  
մականորեն չափազանց օրիգինալ սիտուացիայում հետո էր սոցիալիս-  
տական ռեւոլյուցիա սկսելը, մինչդեռ շարունակել այն և մինչև վերջը  
հասցնել՝ Ռուսաստանի համար ավելի դժվար կլինի, քան եվրոպական  
երկրների համար: Գեոևս 1918 թվականի սկզբին ինձ հարկ եղաւ մատ-  
նանշել այս հանգամանքը, և դրանից հետո երկամյա փորձը լիովին  
հաստատեց այսպիսի կշռադատութեան ճշտութիւնը: Այնպիսի սպեցիֆիկ  
պայմաններ, ինչպիսիք են՝ 1) սովետական հեղաշրջումը իմպերիա-  
լիստական պատերազմի վերջնալու հետ միացնելու հնարավորութիւնը,  
մի պատերազմ, որ աներևակայելիորեն տանջել է բանվորներին ու դյու-  
ղացիներին և վերջացել է սովետական հեղաշրջման շնորհիվ: 2) իմպե-  
րիալիստական գիշատիչների երկու համաշխարհորեն-հզոր խմբերի մահա-  
ցու կելիվը որոշ ժամանակով օգտագործելու հնարավորութիւնը, որպե-  
սի խմբերը չէին կարող միանալ սովետական թշնամու դեմ: 3) համե-  
մատաբար երկարատե քաղաքացիական պատերազմին դիմանալու հնարա-  
վորութիւնը, մասամբ երկրի հսկայական ծավալի ու հաղորդակցու-  
թեան վատ միջոցները շնորհիվ: 4) այնպիսի խորը բուրժուա-դեմոկրա-  
տական ռեւոլյուցիոն շարժման առկայութիւնը դյուղացիութեան մեջ,  
որ պրոլետարիատի պարտիան դյուղացիները պարտիայից (սոց.—ռև.)

պարտիայից, որը, իր մեծամասնութեամբ, խիստ թշնամի է բուլշևիզմին)  
վերջեցեց ռեւոլյուցիոն պահանջները և մեկ անգամից իրականացրեց դրանք՝  
քաղաքական իշխանութիւնը պրոլետարիատի կողմից նվաճված լինելու  
շնորհիվ.—այդպիսի սպեցիֆիկ պայմաններ Արեւմտյան Եվրոպայում  
այժմ չկան և այդպիսի կամ դրանց նման պայմանների կրկնվելը շատ  
էլ հեշտ բան չէ: Ահա թե ինչու, իմիջի ալոց,—բացի մի շարք այլ  
պատճառներից,—Արեւմտյան Եվրոպայի համար սոցիալիստական ռեւոլյու-  
ցիա սկսելի ավելի դժվար է, քան մեզ համար» (տե՛ս հ. XXV, էջ 205):

Լենինի այս խոսքերը չի կարելի մոռանալ:

## II

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՈՒՅԻԱՅԻ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁՆԱ-  
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԿԱՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ  
ՏՐՈՑԿՈՒ ՊԵՐՄԱՆԵՆՏ ՌԵՎՈԼՈՒՅԻԱՅԻ ԹԵՆՈՒՄՆ

Գոյութիւն ունեն Հոկտեմբերյան ռեւոլյուցիայի երկու  
առանձնահատկութիւններ, որոնց պարզելն անհրաժեշտ է  
ամենից առաջ նրա համար, որպեսզի հասկանանք այդ ռե-  
վոլյուցիայի ներքին իմաստն ու պատմական նշանակութիւն-  
ը:

Այդ ի՞նչ առանձնահատկութիւններ են:

Նախ՝ այդ այն փաստն է, որ պրոլետարիատի դիկտա-  
տուրան մեզ մոտ ծնւից որպէս մի իշխանութիւն, որը ծա-  
ղել է պրոլետարիատի ու դյուղացիութեան աշխատավոր  
մասսաների դաշինքի հիմքի վրա, ընդորո՞ւմ վերջինները  
դեկալարվում են պրոլետարիատի կողմից: Երկրորդ՝ այդ  
այն փաստն է, որ պրոլետարիատի դիկտատուրան մեզ մոտ  
հաստատվել է որպէս արդյունք սոցիալիզմի հաղթութեան  
կապիտալիստորեն քիչ զարգացած մի երկրում այն ժամա-  
նակ, երբ կապիտալիզմը պահպանուել է մյուս, կապիտա-  
լիստորեն ավելի զարգացած երկրներում: Այդ չի նշանա-  
կում, իհարկէ, թե Հոկտեմբերյան ռեւոլյուցիան ուրիշ  
առանձնահատկութիւններ չունի: Բայց մեզ համար այժմ  
կարևոր են հենց այս երկու առանձնահատկութիւնները ոչ մի-  
այն այն պատճառով, որ նրանք հստակորեն արտահայտում

են Հոկտեմբերյան ռևոլուցիայի էութունը, այլև այն պատճառով, որ նրանք հիանալի կերպով բացահայտում են «պերմանենտ ռևոլուցիայի» թեորիայի օպորտունիստական բնույթը:

Համառոտակի քննարկենք այդ առանձնահատկութունները:

Քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիայի աշխատավոր մասսաների հարցը, այդ մասսաներին պրոլետարիատի կողմը նվաճելու հարցը պրոլետարական ռևոլուցիայի կարևորագույն հարցն է: Իշխանութիան համար մղվող պայքարում ո՞ւմ կաշակցեն քաղաքի ու գյուղի աշխատավոր մարդիկ՝ բուրժուազիայի՞ն, թե պրոլետարիատին, նրանք ո՞ւմ ռեզերվը կբաժանեն՝ բուրժուազիայի՞ ռեզերվը, թե պրոլետարիատի ռեզերվը, — սրանից է կախված ռևոլուցիայի բախան ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատուն լինելը: 48 և 71 թվականների ռևոլուցիաները Ֆրանսիայում կործանվեցին գլխավորապես այն պատճառով, որ գյուղացիական ռեզերվները բուրժուազիայի կողմը դուրս եկան: Հոկտեմբերյան ռևոլուցիան հաղթեց այն պատճառով, որ կարողացավ բուրժուազիայից խլել նրա գյուղացիական ռեզերվները, կարողացավ այդ ռեզերվները նվաճել պրոլետարիատի կողմը, և այդ ռևոլուցիայի մեջ պրոլետարիատը քաղաքի ու գյուղի աշխատավոր մարդկանց միլիոնավոր մասսաների միակ ղեկավարող ուժը դուրս եկավ:

Ով չի հասկացել այս, նա երբեք չի հասկանա ո՛չ Հոկտեմբերյան ռևոլուցիայի բնույթը, ո՛չ պրոլետարիատի դիկտատուրայի բնույթը, ո՛չ էլ մեր պրոլետարական իշխանութիան ներքին քաղաքականութիան յուրօրինակությունը:

Պրոլետարիատի դիկտատուրան սոսկական կառավարական մի վերնախավ չէ, որը «վարպետներն» «հատընտրված» է «փորձված ստրատեգի» հոգատար ձեռքով և «խելացիորեն» հենվում է» բնակչության այս կամ այն խավերի վրա:

Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի ու գյուղացիութիան աշխատավոր մասսաների դասակարգային դաշինքն է՝ կապիտալի տապալման համար, սոցիալիզմի վերջնական հաղթութիան համար, պայմանով, որ այդ դաշինքի ղեկավար ուժը պրոլետարիատն է հանդիսանում:

Այսպիսով, խոսքն այն մասին չէ այստեղ, որ «մի քիչ» թերագնահատվեն, կամ «մի քիչ» գերագնահատվեն գյուղացիական շարժման ռևոլուցիոն հնարավորությունները, ինչպես այժմ սիրում են արտահայտվել «պերմանենտ ռևոլուցիայի» դիվանագիտական պաշտպաններից ոմանք: Խոսքը վերաբերում է Հոկտեմբերյան ռևոլուցիայի հետևանքով ծագած նոր պրոլետարական պետութիան բնույթին: Խոսքը վերաբերում է պրոլետարական իշխանութիան բնույթին, պրոլետարիատի բուն իսկ դիկտատուրայի հիմունքներին:

«Պրոլետարիատի դիկտատուրան, — ասում է Լենինը, — աշխատավորների պայանքաբե պրոլետարիատի ու աշխատավորների ոչ-պրոլետարական բազմաթիվ խավերի (մանր բուրժուազիա, մանր տնտեսատիրուկներ, գյուղացիութուն, ինտելիգենցիա և այլն), կամ նրանց մեծամասնության միջև կնքված դասակարգային դաշինքի հատուկ ձևն է, — մի դաշինք, որն ուղղված է կապիտալի դեմ, — դաշինք կապիտալը լիովին տապալելու, բուրժուազիայի դիմադրութիան և ռեստավրացիայի նրա կողմից եղած փորձերը լիովին ճնշելու նպատակով, դաշինք սոցիալիզմի վերջնական ստեղծման ու ամբացման նպատակով» (տե՛ս հ. XXIV, էջ 311):

### Եվ այնուհետև.

«Պրոլետարիատի դիկտատուրան, եթե այս լատինական, դիտական, պատմա-փիլիսոփայական արտահայտությունը թարգմանենք ավելի պարզ լեզվով, ահա թե ինչ է նշանակում. միայն որոշ դասակարգ, այն է՝ քաղաքային և առհասարակ Ֆարրիկա-դործարանային, արդյունաբերական բանվորներն են ի վիճակի ղեկավարելու աշխատավորների ու շահագործվողներին ամբողջ մասսային՝ կապիտալի լծի տապալման համար մղվող պայքարում, բուն իսկ տապալման ընթացքում, հաղթութիան պահանջման ու ամբացման համար մղվող պայքարում, նոր, սոցիալիստական հասարակարգ ստեղծելու դործում, դասակարգերի լիակատար ոչնչացման համար մղվող ամբողջ պայքարում» (տե՛ս հ. XXIV, էջ 336):

Այս է պրոլետարիատի ղեկավարության այն թեորիան, որ տվել է Լենինը:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի առանձնահատկություններին մեկն այն է, որ այդ ռևոլյուցիան պրոլետարիատի ղեկավարության լենինյան թեորիայի կլասիկ կերպով է:

Միքանի ընկերներ ենթադրում են, թե այդ թեորիան գուտ «ռուսական» թեորիա է, որը կապ ունի միայն ռուսաստանյան իրականության հետ: Այդ ճիշտ է: Այդ միանգամայն սխալ է: Սոսելով պրոլետարիատի ղեկավարած ոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաների մասին Լենինը նկատի ունի ո՛չ միայն ռուսական գյուղացիներին, այլև Սովետական Միության դեռևս մոտ անցյալում Ռուսաստանի գաղութներ ներկայացնող ծայրամասերի աշխատավորական տարրերին: Լենինն անդադար մասերի աշխատավորական տարրերին: Լենինն անդադար պնդում էր, որ Ռուսաստանի պրոլետարիատն առանց այդ այլազգի մասսաների հետ դաշինք կնքելու չի կարողանա հաղթել: Ազգային հարցին վերաբերող իր հոդվածներում և նոմինալներն կոնգրեսներում արտասանած իր ճառերում Լենինը բազմիցս ասել է, որ համաշխարհային ռևոլյուցիայի հաղթությունն անհնարին է առանց առաջավոր երկրների պրոլետարիատի ռևոլյուցիոն դաշինքի, ռևոլյուցիոն բլոկի՝ ստրկացված գաղութների ճնշված ժողովուրդների հետ: Բայց ի՞նչ են գաղութները, եթե ոչ նույն այդ ճնշված աշխատավոր մասսաները, և ամենից առաջ գյուղացիության աշխատավոր մասսաները: Ո՞ւմ հայտնի է, որ գաղութներն աշխատավոր մասսաները, ըստ էության, ոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաներին ֆինանսական կապիտալի ճնշումից ու շահագործումից ազատելու հարցն է:

Բայց սրանից հետևում է, որ պրոլետարիատի ղեկավարության լենինյան թեորիան գուտ «ռուսական» թեորիա է, այլ մի թեորիա է, որը պարտադիր է բոլոր երկրների համար: Բոլշևիզմը միայն ռուսական երևույթ է: «Բոլշևիզմը», — ասում է Լենինը, — «տակտիկայի տիպար է բոլորի համար» (տե՛ս Հ. XXIII, էջ 386):

Սրանք են Հոկտեմբերյան ռևոլյուցիայի առաջին առանձնահատկությունների բնորոշ դժեբր:

Ի՞նչպես է Տրոցկու «պերմանենտ ռևոլյուցիայի» թեորիայի բանը Հոկտեմբերյան ռևոլյուցիայի այս առանձնահատկության տեսակետից:

Ձենք ընդարձակաբանի Տրոցկու 1905 թվականի դիրքի մասին, երբ նա «պարզապես» մոռացել էր գյուղացիության՝ որպես ռևոլյուցիոն ուժի մասին, առաջադրելով «առանց ցարի, իսկ կառավարությունը բանվորական» լոզունգը, այսինքն՝ ռևոլյուցիա առանց գյուղացիության՝ լոզունգը: Նույնիսկ Ռադեկը, «պերմանենտ ռևոլյուցիայի» այդ դիպլոմատիկ պաշտպանը, այժմ հարկադրված է ընդունել, որ «պերմանենտ ռևոլյուցիան» 1905 թվականին նշանակում էր իրականությունից «ցատկում դեպի օդը»: Հիմա երևի բոլորն էլ ընդունում են, որ այլևս չարժե դատվել այդ «ցատկումով դեպի օդը»:

Ձենք ընդարձակաբանի նաև Տրոցկու՝ պատերազմի ժամանակաշրջանի, ասենք, 1915 թվականի, դիրքի մասին, երբ նա իր «Պայքար իշխանության համար» հոդվածում, ելնելով այն բանից, թե «մենք ապրում ենք իմպերիալիզմի դարաշրջանում», որ իմպերիալիզմը «ո՛չ թե բուրժուական ազգն է հակադրում հին ռեժիմին, այլ պրոլետարիատը՝ բուրժուական ազգին», եկավ այն եզրակացության, որ գյուղացիության ռևոլյուցիոն դերը պետք է նվազի, որ հողի կոնֆիսկացիայի լոզունգն արդեն չունի այն նշանակությունը, ինչ նա ուներ առաջներում: Հայտնի է, որ Լենինը, քննության առնելով Տրոցկու այդ հոդվածը, այն ժամանակ մեղադրում էր նրան «գյուղացիության դերը» «ժխտելու» համար, ասելով, որ «Տրոցկին իրականում օգնում է Ռուսաստանի լիբերալ բանվորական քաղաքագետներին, որոնք գյուղացիության դերի «ժխտում» ասելով՝ հասկանում են ռևոլյուցիայի համար գյուղացիներին ոտքի հանել չցանկանալը» (տե՛ս Հ. XVІІІ, էջ 318):

Ավելի լավ է անցնենք այս հարցի վերաբերյալ Տրոցկու

ամբելի ուշ ժամանակվա աշխատութիւններին, այն ժամանակաշրջանին - աշխատութիւններին, երբ պրոլետարական դիկտատուրան արդեն կարողացել էր հաստատուել և երբ Տրոցկին հնարավորութիւն ուներ գործով ստուգելու «պերմանենտ ռեւոլուցիայի» իր թեորիան և ուղղելու իր սխալները: Վերջինք Տրոցկու «1905 թվականը» գրքի «Առաջաբանը», որ գրված է 1922 թվին: Ահա թե ինչ է ասում Տրոցկին այդ «առաջաբանում» «պերմանենտ ռեւոլուցիայի» մասին.

«Հենց 1905 թվի հունվարի 9-ի և հոկտեմբերյան գործադուլի արանքում ընկած ժամանակամիջոցում կողմավորվեցին հեղինակի այն հայացքները Ռուսաստանի ռեւոլուցիոն զարգացման բնույթի մասին, որոնք ստացան «պերմանենտ ռեւոլուցիայի» թեորիա անունը: Այդ իրթին անվանումն արտահայտում էր այն միտքը, թե ռուսական ռեւոլուցիան, որի առջ անմիջականորեն բուրժուական նպատակներ են կանգնած, որի կարողանա, սակայն, կանգ առնել նրանց վրա: Ռեւոլուցիան չէ կարողանա իր մերձավոր բուրժուական խնդիրները լուծել այլ կերպ, բայց բոլորն էլ ինքնավար դուրս կանգնեցնելով պրոլետարիատին: Իսկ վերջինս, իշխանութիւնն իր ձեռքն առնելով, ռեւոլուցիայի մեջ չէ կարողանա իրեն սահմանափակել բուրժուական շրջանակներով: Ընդհակառակը, հենց իր հաղթութիւնն սպահովելու համար հարկ կլինի, որ պրոլետարական ավանդարդն իր տիրապետութեան առաջին իսկ պահին ամենախոր ներխուժումներ կատարի ո՛չ միայն Ֆեոդալական, այլև բուրժուական սեփականութեան մեջ: Ընդամին նա քշեմաճակով ընդհարումներ կմեծ կծանի ո՛չ միայն բուրժուազիայի բոլոր խմբավորումներին հետ, որոնք նրան աջակցում էին նրա ռեւոլուցիոն պայքարի առաջին պահին, այլև գոյուղացիութեան լայն մասամբի հետ, որոնց աջակցութեամբ նա իշխանութեան է հասել: Գյուղացիական բնակչութեան ճնշող մեծամասնութիւնն ունեցող հետամնաց մի երկրում բանվորական կառավարութեան դրութեան հակասութիւնները կարող են իրենց լուծումը գտնել միայն միջազգային մասշտաբով, պրոլետարիատի համաշխարհային ռեւոլուցիայի ասպարեզում»<sup>1</sup>:

Այսպես է ասում Տրոցկին իր «պերմանենտ ռեւոլուցիայի» մասին:

Բավական է միայն բաղդատել այս ցիտատը Լենինի երկերից վերը բերված՝ պրոլետարիատի դիկտատուրային

<sup>1</sup> Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

վերաբերող ցիտատներին հետ, որպեսզի հասկանանք այն ամբողջ անդունդը, որ բաժանում է պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիան Տրոցկու «պերմանենտ ռեւոլուցիայի» թեորիայից:

Լենինը խոսում է պրոլետարիատի ու գյուղացիութեան աշխատավորական խավերի դաշինքի մասին, որպես պրոլետարիատի դիկտատուրայի հիմքի մասին: Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «պրոլետարական ավանդարդի» «Քշեմաճակով ընդհանուրներ» «գյուղացիութեան լայն մասամբի» հետ:

Լենինը խոսում է պրոլետարիատի կողմից աշխատավորների ու շահագործվողների մասսաներին ղեկավարելու մասին: Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «հակասութեամբ բանվորական կառավարութեան դրութեան մեջ՝ գյուղացիական բնակչութեան ճնշող մեծամասնութիւնն ունեցող հետամնաց մի երկրում»:

Ըստ Լենինի՝ ռեւոլուցիան իր ուժերը քաղում է ամենից առաջ հենց Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների միջից: Իսկ Տրոցկու մոտ այնպես է ստացվում, որ անհրաժեշտ ուժերը կարելի է քաղել միայն «պրոլետարիատի համաշխարհային ռեւոլուցիայի ասպարեզում»:

Իսկ ի՞նչպես վարվենք, եթե միջազգային ռեւոլուցիային վիճակված է ուշացումով գալ: Մեր ռեւոլուցիայի համար լույսի որևէ նշույլ կա՞ արդյոք: Տրոցկին չի տալիս լույսի ոչ մի նշույլ, որովհետև «հակասութիւնները բանվորական կառավարութեան դրութեան մեջ... կկարողանան իրենց լուծումը գտնել միայն... պրոլետարիատի համաշխարհային ռեւոլուցիայի ասպարեզում»: Ըստ այդ պլանի՝ մեր ռեւոլուցիայի համար մնում է միայն մի հեռանկար. քարշտալ իր գոյութիւնը սեփական հակասութիւնների մեջ և արմատի վրա փոխել՝ համաշխարհային ռեւոլուցիայի սպասելով:

Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան՝ ըստ Լենինի:

Պրոլետարիատի դիկտատուրան մի իշխանութիւնն է, որ

Հենվում է պրոլետարիատի ու գյուղացիութան աշխատա-  
վոր մասսաների դաշինքի վրա, որը կնքված է «կապիտալի-  
լիակատար տապալման» համար, «սոցիալիզմի վերջնական  
ստեղծման ու ամրապնդման» համար:

Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան՝ ըստ Տրոցկու:

Պրոլետարիատի դիկտատուրան մի իշխանութուն է,  
որը «թշնամական ընդհարումների մեջ» է մտնում «գյու-  
ղացիութան լայն մասաների» հետ և «հակասություննե-  
րի» լուծումը որոնում է միայն «պրոլետարիատի համաշ-  
խարհային ռևոլուցիայի ասպարեզում»:

Ինչո՞վ է տարբերվում «պերմանենտ ռևոլուցիայի» այս  
«թեորիան» պրոլետարիատի դիկտատուրայի դադարի արի  
ժխտման վերաբերյալ մենչևիզմի հայտնի թեորիայից:

Ըստ էութան՝ ոչնչով:

Տարակույսներն անհնարին են: «Պերմանենտ ռևոլու-  
ցիան» գյուղացիական շարժման ռևոլուցիոն հնարավորու-  
թյունների սոսկական թերազնահատուցյունն է: «Պերմա-  
նենտ ռևոլուցիան» գյուղացիական շարժման այնպիսի թե-  
որազնահատուցյուն է, որը դեպի պրոլետարիատի դիկտա-  
տուրայի լենինյան թեորիայի ժխտումն է տանում:

Տրոցկու «պերմանենտ ռևոլուցիան» մենչևիզմի այլա-  
տեսակությունն է:

Այսպես է բանը Հոկտեմբերյան ռևոլուցիայի առաջին  
առանձնահատկության վերաբերմամբ:

Որո՞նք են Հոկտեմբերյան ռևոլուցիայի երկրորդ  
առանձնահատկության բնորոշ գծերը:

Ուսումնասիրելով իմպերիալիզմը, մանավանդ պատե-  
րազմի ժամանակաշրջանում, Լենինը հանգեց կապիտալիս-  
տական երկրների տնտեսական ու քաղաքական զարգացման  
անհավասարաչափության, թռիչքաձևության օրենքին:  
Ըստ այդ օրենքի իմաստի՝ ձեռնարկությունների, տրեստ-  
ների, արդյունաբերության ճյուղերի ու առանձին երկրնե-  
րի զարգացումը կատարվում է ո՛չ թե հավասարաչափ կեր-  
պով, ո՛չ թե սահմանված հերթականության կարգով, ո՛չ

թե այնպես, որ մի տրեստը, արդյունաբերության մի ճյու-  
ղը կամ մի երկիրն ամբողջ ժամանակ առջևից գնան, իսկ  
մյուս տրեստները կամ երկրները հաջորդականորեն մեկը  
մյուսի հետևից հետ մնան, — այլ թռիչքաձև, մի շարք եր-  
կրների զարգացման մեջ տեղի ունեցող ընդհատումներով  
ու մյուս երկրների զարգացման մեջ տեղի ունեցող թռիչք-  
ներով դեպի առաջ: Ընդամին հետ մնացող երկրների հին  
դիրքերը պահպանելու «միանգամայն օրինական» ձգտումը  
և առաջ ցատկած երկրների՝ նոր դիրքեր զավթելու նույն-  
քան «օրինական» ձգտումն այն բանին են հասցնում, որ  
իմպերիալիստական երկրների պատերազմական ընդհարում-  
ներն անխուսափելի անհրաժեշտություն են հանդիսանում:  
Այդպես պատահեց, օրինակ, Գերմանիային, որը կես դար  
առաջ, Փրանսիայի ու Անգլիայի հետ համեմատած, մի հե-  
տամնաց երկիր էր: Նույն այդ բանը պետք է ասել Յապո-  
նիայի մասին՝ Ռուսաստանի հետ համեմատած: Մակայն  
հայտնի է, որ արդեն XX դարի սկզբին Գերմանիան ու Յա-  
պոնիան այնքան էին առաջ ցատկել, որ առաջինը կարողա-  
ցել էր անցնել Փրանսիայից ու սկսել էր նեղել Անգլիային  
համաշխարհային շուկայում, իսկ երկրորդը՝ Ռուսաստա-  
նին: Հենց այդ հակասություններից էլ, ինչպես հայտնի է,  
ծագեց մոտ անցյալի իմպերիալիստական պատերազմը:

Այդ օրենքը ելնում է նրանից, որ

1) «կապիտալիզմը վերածել է մի բուռ «առաջավոր»  
երկրների կողմից երկրագնդի բնակչության հսկայական  
մեծամասնությունը զաղութային ճնշման ու Փինանսական  
խեղձման ենթարկելու համաշխարհային սխտեմի» (տե՛ս  
Լենինի «Իմպերիալիզմի» Փրանսերեն հրատարակության  
առաջաբանը, հ. XIX, էջ 74):

2) «Այդ «ավարի» բաժանումը կատարվում է համաշ-  
խարհորեն-հզոր, ոտից-գլուխ զինված երկու-երեք դիշա-  
տիչների (Ամերիկա, Անգլիա, Յապոնիա) միջև, որոնք  
իրենց ավարը բաժանելու համար մղած իրենց պատերազմի  
մեջ են քաշում ամբողջ երկրագունդը» (տե՛ս նույն տեղը):

3) Հակասությունների աճումը ֆինանսական ճնշման համաշխարհային սիստեմի ներսում և ուղղակի ընդհանրումների անխուսափելիությունը տանում են դեպի այն, որ իմպերիալիզմի համաշխարհային ճակատը ուղղակի համար դառնում է դյուրախոցելի, իսկ այդ ճակատի ճեղքումն առանձին երկրների կողմից՝ հավանական:

4) Այդ ճեղքումն ամենից ավելի հավանական կերպով կարող է տեղի ունենալ այն կետերում և այն երկրներում, որտեղ իմպերիալիստական ճակատի շղթան ավելի թույլ է, այսինքն՝ որտեղ իմպերիալիզմն ամենից քիչ է կոփված, իսկ ուղղակի համար ծավալվելն ամենից հեշտ է:

5) Դրա համար էլ սոցիալիզմի հաղթությունը մի երկրում, —եթե այդ երկիրը նույնիսկ ավելի պակաս է դարձացած կապիտալիստներն, իսկ կապիտալիզմը պահպանվել է մյուս երկրներում, եթե այդ երկրները կապիտալիստներն նույնիսկ ավելի են զարգացած, —լիովին հնարավոր է ու հավանական:

Մրանք են՝ երկու խոսքով ասած՝ պրոլետարական ուղղությունների լենինյան թեորիայի հիմունքները:

Ո՞րն է Հոկտեմբերյան ուղղության երկրորդ առանձնահատկությունը:

Հոկտեմբերյան ուղղության երկրորդ առանձնահատկությունն այն է, որ այդ ուղղության պրոլետարական ուղղության լենինյան թեորիան պրակտիկայում կիրառելու տիպարն է:

Ով չի հասկացել Հոկտեմբերյան ուղղության այս առանձնահատկությունը, նա երբեք չի հասկանա ո՛չ այդ ուղղության ինտերնացիոնալ բնույթը, ո՛չ նրա միջազգային հսկայական հզորությունը, ո՛չ նրա յուրօրինակ արտաքին քաղաքականությունը:

«Տեսնական ու քաղաքական զարգացման անհավասարաչափությունը, —ասում է Լենինը, —կապիտալիզմի անսպասելի օրենքն է: Այստեղից հետևում է, որ սոցիալիզմի հաղթությունը հնարավոր է սկզբում մի քանի կամ նույնիսկ մի՛ առանձին վերջրած՝ կապիտալիստական երկրում: Այդ երկրի հաղթած պրոլետարիատը, կապիտալիստներին

էքսպրոպրիացիայի ենթարկելուց և իր երկրում սոցիալիստական արտադրություն կազմակերպելուց հետո, ոտքի կեննը մնացած, կապիտալիստական աշխարհի դեմ՝ իր կողմը դրավելով մյուս երկրների ճնշված դասակարգերին, այդ երկրներում ապստամբություն բարձրացնելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտության դեպքում նույնիսկ ուղղակի հանդես գալով շահագործող դասակարգերն և նրանց պետությունների դեմ»: Որովհետև «անհարկն է ազգերի ազատ միավորումը սոցիալիզմի մեջ առանց սոցիալիստական ուսպուրվիկաների շատ թե քիչ երկարատե, համառ պայքարի՝ հետամնաց պետությունների դեմ» (տե՛ս 4. XVIII, էջ 232—233):

Ի՞նչը երկրների օպորտունիստները պնդում են, թե պրոլետարական ուղղության կարող է սկսվել—եթե նա, ըստ նրանց թեորիայի, ընդհանրապես պետք է որևէ տեղ սկսվի—միայն արդյունաբերականորեն զարգացած երկրներում, թե որքան ավելի են զարգացած այդ երկրներն արդյունաբերական տեսակետից, այնքան ավելի շանքը կան սոցիալիզմի հաղթության համար, ըստորում մի երկրում, այն էլ կապիտալիստներն քիչ զարգացած երկրում, սոցիալիզմի հաղթելու հնարավորությունը նրանք բացառում են, իբրև միանգամայն անհավանական մի բան: Լենինը դեռևս պատերազմի ժամանակ, հենվելով իմպերիալիստական պետությունների անհավասարաչափ զարգացման օրենքի վրա, օպորտունիստներին հակադրում է պրոլետարական ուղղության իր թեորիան այն մասին, որ սոցիալիզմը կարող է հաղթել մի երկրում, եթե նույնիսկ այդ երկիրը կապիտալիստներն պակաս է զարգացած:

Հայտնի է, որ Հոկտեմբերյան ուղղության ամբողջապես հաստատեց պրոլետարական ուղղության լենինյան թեորիայի ճշտությունը:

Ի՞նչպես է Տրոցկու «պերմանենտ ուղղության» բանը պրոլետարական ուղղության լենինյան թեորիայի տեսակետից:

Վերցնենք Տրոցկու «Մեր ուղղության» (1906 թ.) բրոշյուրը:

Տրոցկին գրում է:



«Առանց եվրոպական պրոլետարիատի պետական ուղղակի աջակցության՝ Ռուսաստանի բանվոր դասակարգը չի կարողանա իշխանութիան գլուխը մնալ և իր ժամանակավոր տիրապետութիւնը վերածել երկարատե սոցիալիստական դիկտատուրայի: Սրա մասին մի բոլոր անգամ չի կարելի կասկածել»:

Ինչի՞ մասին է խոսում այս ցիտատը: Հենց այն մասին, որ սոցիալիզմի հաղթութիւնը մի երկրում, տվյալ դեպքում՝ Ռուսաստանում, անհնարին է «առանց եվրոպական պրոլետարիատի պետական ուղղակի աջակցութեան», այսինքն՝ մինչև եվրոպական պրոլետարիատի կողմից իշխանութիւն նվաճելը:

Ի՞նչ ընդհանուր բան կա այս «Թեորիայի» և Լենինի այն դրույթի միջև, որ հնարավոր է սոցիալիզմի հաղթութիւնը «մեկ՝ առանձին վերցրած՝ կապիտալիստական երկրում»:

Պարզ է, որ այստեղ ընդհանուր ոչինչ չկա:

Բայց ենթադրենք, թե Տրոցկու այս բրոշյուրը, որ հրատարակվել է 1906 թվականին, երբ դժվար էր որոշել մեր ռեւոլյուցիայի բնույթը, ահամա սխալներ է պարունակում և ոչ-լիովին է համապատասխանում Տրոցկու ավելի ուշ ժամանակաշրջանի հայացքներին: Քննութեան առնենք Տրոցկու մեկ ուրիշ բրոշյուրը, նրա «Հաշտութեան ծրագրերը», որը լույս է ընծայվել 1917 թ. Հոկտեմբերյան ռեւոլյուցիայի նախորդակին և այժմ (1924 թ.) վերահրատարակվել է «1917» զրքում: Այս բրոշյուրում Տրոցկին քննադատում է պրոլետարական ռեւոլյուցիայի լենինյան թեորիան մի երկրում սոցիալիզմի հաղթելու մասին և նրան հակադրում է Եվրոպայի Միացյալ Նահանգների լոգունդը: Նա պնդում է, թե սոցիալիզմի հաղթութիւնը մի երկրում անհնարին է, թե սոցիալիզմի հաղթութիւնը հնարավոր է միմիայն որպես Եվրոպայի միավորված ու Եվրոպայի Միացյալ Նահանգներ կազմված միջանի հիմնական երկրների

(Անգլիա, Ռուսաստան, Գերմանիա) հաղթութիւն, կամ այդ հաղթութիւնը բոլորովին անհնարին է: Նա ուղղակի ասում է, որ «հաղթական ռեւոլյուցիան Ռուսաստանում կամ Անգլիայում աներևակայելի է առանց Գերմանիայի ռեւոլյուցիայի, և ընդհակառակը»:

«Պատմական փոքրիշատե կոնկրետ միակ նկատառումը Միացյալ Նահանգների լոգունդի դեմ, — ասում է Տրոցկին, — ձևակերպվել է չվերացարկան «Սոցիալ-Դեմոկրատում» (բուլշևիկների այն ժամանակվա կենտրոնական օրգանը: Ի. Ստ.) հետևյալ Փրոպի մեջ: «Տնտեսական փառաքանական զարգացման անհավասարաչափութիւնը կապիտալիզմի անպայման օրենքն է»: «Սոցիալ-Դեմոկրատն» այստեղից անում էր այն հետևութիւնը, որ հնարավոր է սոցիալիզմի հաղթութիւնը մի երկրում և որ այդ պատճառով կարիք չկա պրոլետարիատի դիկտատուրան յուրաքանչյուր առանձին պետութեան մեջ պայմանավորել Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծումով: Որ տարրեր երկրների կապիտալիստական զարգացումն անհավասարաչափ է, այդ միանշանակ անվիճելի դատողութիւն է: Բայց այդ անհավասարաչափութիւնն ինքը միանգամայն անհավասարաչափ է: Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի կամ Ֆրանսիայի կապիտալիստական մակարդակը միտոսեակ չէ: Բայց ԱՖրիկայի ու Ասիայի հետ համեմատած՝ այդ բոլոր երկրները ներկայացնում են կապիտալիստական «Եվրոպա», որը հասունացել է սոցիալական ռեւոլյուցիայի համար: Որ ո՛չ մի երկիր իր պայքարում չպետք է «սղոսի» ուրիշներին — այս տարբական մի միտք է, որն օգտակար ու անսթեղծ է կրկնել, որպէսզի զուգահեռ ինտերնացիոնալ ղործողութեան գաղափարը չնենգափոխվի ինտերնացիոնալ սոցիալական անգործութեան գաղափարով: Ուրիշներին չսպասելով՝ մենք սկսում և շարունակում ենք պայքարն ազգային հողի վրա, լիովին հավատացած լինելով, որ մեր նախաձեռնութիւնը զարկ կտա մյուս երկրներում տեղի ունեցող պայքարին: Իսկ ԵՊԵ այդ տեղի չունենար, ապա անհուսալի է կարծել — այս են վիշտում թե՛ պատմութեան փորձը, թե՛ թեորիական նկատառումները: — որ, օրինակ, ռեւոլյուցիոն Ռուսաստանը կարող կլինի դիմանալ պահանջողական Եվրոպայի հանդեպ, կամ սոցիալիստական Գերմանիան կարող կլինի մեկուսացած մնալ կապիտալիստական աշխարհում»:

Ինչպէս տեսնում եք, մեր առջև է Եվրոպայի հիմնական երկրներում սոցիալիզմի միաժամանակ հաղթելու նույն թեորիան, որը, իբրև կանոն, բացառում է ռեւոլյուցիայի

լենինյան թեորիան՝ մի երկրում սոցիալիզմի հաղթելու մասին:

Ինչ խոսք, որ սոցիալիզմի լիակատար հաղթության համար, հին կարգերի վերականգնման դեմ լիակատար երաշխիք ունենալու համար անհրաժեշտ են միջանի երկրների պրոլետարներին միահամուռ ջանքերը: Ինչ խոսք, որ առանց Եվրոպայի պրոլետարիատի աջակցության մեր ուսուցիչային՝ Ռուսաստանի պրոլետարիատը չէր կարողանա դիմանալ (УСТОЯТЬ) ընդհանուր ճնշմանը, ճիշտ այնպես, ինչպես և Արևմուտքի ուսուցիչին շարժումն առանց Ռուսաստանի ուսուցիչային աջակցության չէր կարողանա զարգանալ այն տեմպով, որով նա սկսեց զարգանալ Ռուսաստանում պրոլետարական ղեկատարության հաստատվելուց հետո: Ինչ խոսք, որ մեզ աջակցություն է հարկավոր: Բայց ի՞նչ բան է արևմտա-եվրոպական պրոլետարիատի աջակցությունը մեր ուսուցիչային: Եվրոպական բանվորների համակրանքը դեպի մեր ուսուցիչան, նրանց սրատրաստակամությունը՝ խափանելու իմպերիալիստներին՝ ինտերվենցիայի վերաբերյալ պլանները—այս ամենն աջակցություն է արդյոք, լուրջ օգնություն է: Անպայման՝ այո՛: Առանց այդպիսի աջակցության, առանց ո՛չ միայն եվրոպական բանվորների, այլև դաղուծային ու կախյալ երկրների այդպիսի աջակցության, այդպիսի օգնության՝ Ռուսաստանի պրոլետարական ղեկատարային բանը զժպար կլիներ: Արդյոք մինչև այժմ բավական է եղել այդ համակրանքը և այդ օգնությունը, որը միացած է մեր Կարմիր բանակի հզորության հետ և Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների՝ սոցիալիստական հայրենիքը կրճքով պաշտպանելու պատրաստակամության հետ, — արդյո՞ք այս ամենը բավական է եղել, որպեսզի հետ մղենք իմպերիալիստներին գրոհները և անհրաժեշտ իրազրություն նվաճենք լուրջ շինարարական աշխատանքի համար: Այո՛, բավական է եղել: Այդ համակրանքն աճո՞ւմ է արդյոք, թե նվազում է: Անպայման աճում է: Այդպիսով, մենք ունենք արդյոք բարենպաստ

պայմաններ ոչ միայն նրա համար, որպեսզի առաջ շարժենք սոցիալիստական անտեսություն կազմակերպելու գործը, այլև նրա համար, որպեսզի, մեր հերթին, աջակցություն ցույց տանք ինչպես արևմտա-եվրոպական բանվորներին, այնպես էլ Արևելքի ճնշված ժողովուրդներին: Այո՛, ունենք: Դրա մասին պերճախոս կերպով վկայում է պրոլետարական ղեկատարության յոթնամյա պատմությունը Ռուսաստանում: Կարելի՞ է արդյոք ժխտել, որ աշխատանքային հուժկու վերելքը մեղանում սկսվել է արդեն: Ո՛չ, չի կարելի ժխտել:

Այս ամենից հետո ի՞նչ նշանակություն կարող է ունենալ Տրոցկու հայտարարությունն այն մասին, թե ուսուցիչին Ռուսաստանը չէր կարողանա դիմանալ պահպանողական Եվրոպայի հանդեպ:

Դա կարող է միայն մի նշանակություն ունենալ.— նախ՝ Տրոցկին չի գրում մեր ուսուցիչային ներքին հզորությունը. երկրորդ՝ Տրոցկին չի հասկանում այն բարոյական աջակցության անդնահատելի նշանակությունը, որ մեր ուսուցիչային ցույց են տալիս Արևմուտքի բանվորներն ու Արևելքի գյուղացիները. երրորդ՝ Տրոցկին չի կարողանում ըմբռնել այն ներքին անդրությունը, որը ներկայումս մաշում է իմպերիալիզմին:

Տարվելով պրոլետարական ուսուցիչային լենինյան թեորիայի քննադատություն՝ Տրոցկին անակնկալորեն դիտվին Չախճախեց իրեն 1917 թվին լույս տեսած և 1924 թվին վերահրատարակված իր «Հաշտության ծրագիր» բրոշյուրում:

Բայց դուցե հնացել է Տրոցկու նաև ա՞յս բրոշյուրը, որևէ պատճառով դադարելով նրա այժմյան հայացքներին համարատասխանելուց: Վերցնենք Տրոցկու ավելի ուշ ժամանակների աշխատությունները, որոնք գրվել են այն ժամանակ, երբ պրոլետարական ուսուցիչան հաղթել էր Վիերկրում, Ռուսաստանում: Վերցնենք, օրինակ, «Հաշտության ծրագիր» բրոշյուրի նոր հրատարակության Տրոցկու

«Վերջաբանը», որ գրված է 1922 թվականին: Ահա թե ինչ է գրում նա այդ «Վերջաբանում».

«Հաշտության ծրագրում» միջանի անգամ կրկնվող այն պնդումը, թե պրոլետարական ուղուցիան չի կարող հաղթահանորեն ավարտվել ազգային շրջանակներում, թերևս, ընթերցողներից ոմանց համար հերքված թվա մեր Սովետական Ռեսպուբլիկայի համարյա հնգամյա փորձով: Բայց այդպիսի եզրակացությունն անհիմն կլիներ: Այն փաստը, որ ամբողջ աշխարհի դեմ բանվորական պետությունը կանգուն մնաց մի երկրում, այն էլ հետամնաց մի երկրում, վկայում է պրոլետարիատի հսկայական հզորության մասին, որն ուրիշ, ավելի առաջավոր, ավելի քաղաքակիրթ երկրներում ընդունակ կլինի հիմարվել հրաշքեր զործելու: Իսկ այդ պաշտպանելով ու պահպանելով մեզ քաղաքական ու ռազմական իմաստով, որպես պետություն, մենք սոցիալիստական հասարակության ստեղծման չհասանք և նույնիսկ չմոտեցանք... Քանի դեռ մնացած եվրոպական պետություններում իշխանության դուրս կանգնած է բուրժուազիան, մենք, պայքարելով տնտեսական մեկուսացման դեմ՝ ստիպված ենք համաձայնություն որոնել կապիտալիստական աշխարհի հետ. միևնույն ժամանակ կարելի է վստահ կերպով ասել, որ այդ համաձայնությունները, լավադուրյն դեպքում, կարող են օգնել մեզ բժշկելու այս կամ այն տնտեսական վերքերը, անելու այս կամ այն քայլը դեպի առաջ, բայց որ սոցիալիստական տնտեսության իսկական վերելքը Ռուսաստանում հնարավոր կդառնա եվրոպայի կարևորագույն երկրներում պրոլետարիատի հաղթելուց հետո միայն»<sup>1</sup>:

Այսպես է ասում Տրոցկին՝ ակնհայտորեն մեղանչելով իրականությունը դեմ և համառորեն ջանալով վերկել «պերմանենտ ուղուցիան» վերջնական կործանումից:

Դուրս է գալիս, որ ինչպես էլ շուռումուռ գաս, սոցիալիստական հասարակության ստեղծման ո՛չ միայն «չենք հասել», այլ մինչև անգամ «չենք էլ մոտեցել»: Իսկ ինչ դուրս է գալիս, որ ոմանք «կապիտալիստական աշխարհի հետ համաձայնությունների գալու» հույս են ունեցել, բայց պարզվում է, որ այդ համաձայնություններից նույնպես բան դուրս չի գալիս, որովհետև, ինչպես էլ շուռումուռ գաս, «սոցիալիստական տնտեսության իսկական վերելքը» չես ստանա, մինչև որ պրոլետարիատը «Եվրոպայի կարևորագույն երկրներում» չհաղթի:

<sup>1</sup> Ընդդժմն իմն է: Ի. Ստ.:

Իսկ քանի որ Արևմուտքում դեռևս հաղթություն չկա, ապա Ռուսաստանի ուղուցիայի համար մնում է «ընտրություն անել»—կա՛մ արմատի վրա փոխել, կա՛մ վերասերվել բուրժուական պետության:

Զուր չէ, որ Տրոցկին ահա արդեն երկու տարի է խոսում է մեր պարտիայի «վերասերման» մասին:

Զուր չէ, որ Տրոցկին անցյալ տարի մարզարեանում էր մեր երկրի «կործանման» մասին:

Այս տարօրինակ «թեորիան» ի՞նչպես համաձայնեցնել «մի երկրում սոցիալիզմի հաղթության» վերաբերյալ Լենինի թեորիայի հետ:

Այս տարօրինակ «հեռանկարն» ի՞նչպես համաձայնեցնել Լենինի այն հեռանկարի հետ, ըստ որի տնտեսական նոր քաղաքականությունը մեզ հնարավորություն կտա «սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը կառուցելու»:

Այս «պերմանենտ» անհուսուլթյունն ի՞նչպես համաձայնեցնենք Լենինի, օրինակ, հետևյալ խոսքերի հետ.

«Սոցիալիզմն արդեն այժմ հեռավոր ապագայի, կամ որևէ վերացական պատկերի, կամ որևէ սրբապատկերի հարց չէ: Սրբապատկերների նկատմամբ մենք մնացել ենք մեր հին, խիստ վատ կարծիքին: Մենք սոցիալիզմը մտցրել ենք սոբորյա կյանքի մեջ և այստեղ է, որ պետք է դուրս հանենք: Ահա թե ինչն է մեր օրվա խնդիրը, ահա թե ինչն է մեր դարաշրջանի խնդիրը: Թույլ տվեք ինձ վերջացնելու՝ արտահայտելով այն վստահությունը, որ ինչքան էլ այդ խնդիրը դժվար լինի, ինչքան էլ այն նոր լինի մեր առաջվա խնդրի հետ համեմատած և որքան էլ այն շատ դժվարություններ է պատճառում մեզ, —մենք բոլորս միասին ոչ թե վաղը, այլ մի քանի տարվա ընթացքում, մենք բոլորս՝ միասին կլուծենք այդ խնդիրը՝ ինչպես էլ լինի, այնպես որ նեպական Ռուսաստանից կստացվի սոցիալիստական Ռուսաստան» (տե՛ս հ. XXVII, էջ 366):

Ի՞նչպես համաձայնեցնենք այդ «պերմանենտ» խավարամտությունը Լենինի, օրինակ, հետևյալ խոսքերի հետ.

«Երբ, պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, այդ պրոլետարիատի դաշինքը շատ մեղիներ կազմող մանր ու մանրագույն դուրգայիների հետ, այդ պրոլետարիատի համար դուրգայի ու

թիւնը դեկտեմբերի 10-ը դործն ապահովելը և այլն,—մի՞թե այս այն ամենը չէ, ինչ հարկովոր է, որպեսզի կոպերացիայից, միմիայն կոպերացիայից, որ մենք առաջ արհամարհում էինք որպես շարժական և որը որոշ տեսակետից իրավունք ունենք արհամարհելու այժմ՝ նեպի պայմաններում նույնպես,—մի՞թե այս բոլոր անհրաժեշտը չէ լրակատար սոցիալիստական հասարակութուն կառուցելու համար: Այս դեռևս սոցիալիստական հասարակութւյն կառուցում չէ, բայց այս այն ամենն է, ինչ անհրաժեշտ է և բավական այդ կառուցման համար» (տե՛ս հ. XXVII, էջ 392):

Պարզ է, որ այստեղ չկա ու չի էլ կարող լինել ոչ մի համաձայնեցում: Տրոցկու «պերմանենտ ռեուլյուցիան» պրոլետարական ռեուլյուցիայի լենինյան թեորիայի բացատրման է, և ընդհակառակը—պրոլետարական ռեուլյուցիայի լենինյան թեորիան «պերմանենտ ռեուլյուցիայի» թեորիայի բացատրման է:

Մեր ռեուլյուցիայի ուժերին ու ընդունակութիւններին չհավատալը, ռուսաստանյան պրոլետարիատի ուժերին ու ընդունակութիւններին չհավատալը—այս է «պերմանենտ ռեուլյուցիայի» թեորիայի ենթահողը (ПОДПОЧВА):

Մինչև այժմ սովորաբար նշում էին «պերմանենտ ռեուլյուցիայի» թեորիայի մի կողմը—գյուղացիական շարժման ռեուլյուցիոն հնարավորութիւններին չհավատալը: Այժմ, արդարացի լինելու համար, այդ կողմն անհրաժեշտ է լրացնել մյուս կողմով—Ռուսաստանի պրոլետարիատի ուժերին ու ընդունակութիւններին չհավատալով:

Ինչո՞վ է տարբերվում Տրոցկու թեորիան մենչևիզմի սովորական թեորիայից այն մասին, թե սոցիալիզմի հաղթութիւնը մի երկրում, այն էլ հետամնաց երկրում, անհնարին է առանց պրոլետարական ռեուլյուցիայի նախապես հաղթելուն «Արևմտյան Եվրոպայի հիմնական երկրներում»:

Ըստ էութեան ոչնչով:

Տարակույսներն անհնարին են: Տրոցկու «պերմանենտ ռեուլյուցիայի» թեորիան մենչևիզմի այլատեսակութիւնն է:

Վերջին ժամանակներս մեր մամուլում երևան են եկել փոսած դիպլոմատներ, որոնք ջանում են «պերմանենտ ռե-

վոլյուցիայի» թեորիան անցկացնել որպես լենինիզմի հետ համատեղելի ինչ-որ մի բան: Իհարկե, ասում են նրանք, այդ թեորիան անպետք դուրս եկավ 1905 թվականին: Բայց Տրոցկու սխալն այն է, որ նա այն ժամանակ առաջ էր վազել, փորձելով 1905 թվականի իրադրութեան նկատմամբ կիրառել այն, ինչ որ այն ժամանակ չէր կարելի կիրառել: Բայց հետագայում, ասում են նրանք, օրինակ՝ 1917 թվականի հոկտեմբերին, երբ ռեուլյուցիան կարողացել էր լիովին հասունանալ, Տրոցկու թեորիան իբր թե միանգամայն տեղին դուրս եկավ: Դժվար չէ կուսակցի, որ այդ դիպլոմատներից ամենազլխավորը Ռադեկին է: Չե՞ք հաճի արդյոք ունկնդրել:

«Պատերազմն անդունդ փորեց հող նվաճելու ու հատուցիւթիւն ձգող գյուղացիութեան և մանր-բուրժուական պարտիաների միջև. պատերազմը գյուղացիութիւնը հանձնեց բանվոր դասակարգի և նրա ալանգարդի՝ բուրժուական պարտիայի ղեկավարութեանը: Հնարավոր դարձավ ոչ թե բանվոր դասակարգի ու գյուղացիութեան դիկտատուրան, այլ գյուղացիութեան վրա հենվող բանվոր դասակարգի դիկտատուրան: Այն, ինչ որ Ռոզա Լուքսեմբուրգն ու Տրոցկին 1905 թվականին առաջադրում էին լենինի դմ (այսինքն՝ «պերմանենտ ռեուլյուցիան»: Ի. Ստ.), իրականում պատմական զարգացման երկրորդ էտապ դուրս եկավ»:

Այստեղ յուրաքանչյուր խոսքը խարդախումն է:

Ճիշտ չէ, թե պատերազմի ժամանակ «հնարավոր դարձավ ոչ թե բանվոր դասակարգի ու գյուղացիութեան դիկտատուրան, այլ գյուղացիութեան վրա հենվող բանվոր դասակարգի դիկտատուրան»: Իրապես 1917 թվականի Փետրվարյան ռեուլյուցիան էր պրոլետարիատի ու գյուղացիութեան դիկտատուրայի իրականացումը, որ յուրատեսակ կերպով միահյուսված էր բուրժուազիայի դիկտատուրայի հետ:

Ճիշտ չէ, թե «պերմանենտ ռեուլյուցիայի» թեորիան, որի մասին Ռադեկն ամօթխածութեամբ լուռ է, 1905 թ. Ռոզա Լուքսեմբուրգն ու Տրոցկին են առաջադրել: Իրապես այդ թեորիան առաջադրել էին Պարվուսն ու Տրոցկին: Այժմ, տասն ամիս անց, Ռադեկն ուղղում է իրեն՝ հարկա-

վոր համարելով հայհոյել Պարվուսին «պերմանենտ ունի-  
լուցիայի» համար: Բայց քարդարությունը պահանջում է  
Ռադեկից, որ հայհոյանքի ենթարկվի նաև Պարվուսի կոմ-  
պանիոնը—Տրոցկին:

Ճիշտ է, թե 1905 թվի ուղուցիայի կողմից դեն  
չպրտված «պերմանենտ ունիլուցիան» ուղիղ դուրս եկավ  
«պատմական դարձացման երկրորդ էտապում», այսինքն՝  
Հոկտեմբերյան ուղուցիայի ժամանակ: Հոկտեմբերյան  
ուղուցիայի ամբողջ ընթացքը, նրա ամբողջ դարձացումը  
ցույց տվին ու ապացուցեցին «պերմանենտ ունիլուցիայի»  
թեորիայի լիակատար սնանկութունը, նրա լիակատար ան-  
համատեղելիութունը լենինիզմի հիմունքների հետ:

Քաղցրիկ ճառերով ու փոսած դիպլոմատիայով չես  
ծածկի այն լայներախ անդունդը, որ ընկած է «պերմա-  
նենտ ունիլուցիայի» թեորիայի և լենինիզմի միջև:

### III

ԲՈՒՇՆԵՎԻԿՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՄԻՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Որպեսզի հասկանանք բոլշևիկներին՝ Հոկտեմբերի նա-  
խապատրաստման ժամանակաշրջանի տակտիկան, անհրա-  
թեշտ է, որ պարզենք մեզ համար այդ տակտիկայի գոնե  
մի քանի առանձնապես կարևոր առանձնահատկութունները:  
Այդ առավել ևս անհրաժեշտ է այն պատճառով, որ բոլշե-  
վիկներին տակտիկային վերաբերող բազմաթիվ բրոշյուրնե-  
րում հաճախ անտեսվում են հենց այդ առանձնահատկու-  
թյունները:

Այդ ի՞նչ առանձնահատկութուններ են:

Առաջին առանձնահատկություն: Եթե լսես Տրոցկուն,  
կարելի է կարծել, թե Հոկտեմբերի նախապատրաստման  
պատմութունն ունի ընդամենը երկու ժամանակաշրջան՝  
հետախուզության ժամանակաշրջան և ապստամբության  
ժամանակաշրջան, իսկ ինչ դրանից ավելի է, այն ի չարեն

է: Ի՞նչ բան է 1917 թվի ապրիլյան մանիֆեստացիան:  
«Ապրիլյան մանիֆեստացիան, որն ավելի «ձախ» ընթացավ,  
քան հարկն էր, մի հետախուզական արտելը (ВЫЛАЗКА)  
էր՝ ստուգելու համար մասսաների տրամադրութունն ու  
փոխհարաբերութունները նրանց ու սովետական մեծա-  
մասնության միջև»: Իսկ ի՞նչ բան է 1917 թվի հուլիսյան  
ցույցը: Տրոցկու կարծիքով՝ «ըստ էության այս անգամ էլ  
գործը հանգեց նոր, ավելի լայն հետախուզության՝ շարժ-  
ման նոր, ավելի բարձր էտապում»: Ինչ ասել կուզի, որ  
մեր պարտիայի պահանջով սարքված՝ 1917 թվի հունի-  
սյան դեմոնստրացիան ըստ Տրոցկու պատկերացման՝ առա-  
վել ևս պետք է «հետախուզութուն» կոչվի:

Այսպիսով՝ դուրս է գալիս, որ բոլշևիկներն արդեն  
1917 թվականի մարտին ունեին պատրաստի քաղաքական  
բանակ՝ բաղկացած բանվորներից ու գյուղացիներից, և  
եթե այդ նրանք գործի չէին դնում անստամբության հա-  
մար ո՛չ ապրիլին, ո՛չ հունիսին, ո՛չ էլ հուլիսին, այլ դադա-  
վում էին լուրջ «հետախուզությամբ», ապա այդ այն սրատ-  
ճառով, և միմիայն այն պատճառով էր, որ «հետախու-  
զության տվյալներն» այն ժամանակ նպաստավոր «ցույց-  
մունքներ» չէին տալիս:

Ինչ ասել կուզի, որ մեր պարտիայի քաղաքական  
տակտիկայի այս դոկտրինայից պատկերացումը ոչ այլ ինչ  
է, եթե ոչ սովորական ռազմական տակտիկայի շփոթումը  
բոլշևիկներին ուղուցիոն տակտիկայի հետ:

Իրապես այդ բոլոր դեմոնստրացիաները, ամենից  
առաջ, արդյունք էին մասսաների տարերային ճնշման, ար-  
դյունք էին մասսաների բուռն կերպով փողոց ձգտող զայ-  
րույթի՝ ընդդեմ պատերազմի:

Իրապես պարտիայի դերն այստեղ հանգում էր մասսա-  
ների տարերայնորեն ծագող ելույթների ձևավորմանն ու  
դեկավաբաման՝ բոլշևիկների ուղուցիոն լոզունգների  
գծով:

Բոլշևիկներն իրապես չունեին, և 1917 թվի մարտին  
չէին էլ կարող ունենալ, քաղաքական պատրաստի բանակ:

Բողջեիկները միայն ստեղծում էին այդպիսի բանակ (և այն, վերջապես, ստեղծեցին մինչև 1917 թվի հոկտեմբերը) դասակարգերի պայքարի ու ընդհարումների ընթացքում՝ 1917 թվի ապրիլից մինչև հոկտեմբերը, ստեղծում էին այն թե՛ ապրիլյան մանիֆեստացիայի միջոցով, թե՛ հունիսյան ու հուլիսյան դեմոնստրացիաների միջոցով, թե՛ շրջանային ու համաքաղաքային դեմոնստրացիաների միջոցով, թե՛ կոոնսիլով չչինոսյի դեմ պայքարելու միջոցով, թե՛ Սովետները նվաճելու միջոցով: Քաղաքական բանակն այն է, ինչ որ ռազմական բանակն է: Եթե զինվորական հրամանատարությունը պատերազմի է դիմում՝ ձեռքին արդեն պատրաստի բանակ ունենալով, ապա պարտիան ստիպված է իր բանակն ստեղծել բուն իսկ պայքարի ընթացքում, դասակարգերի ընդհարումների ընթացքում, այն չափով, ինչ չափով իրենք մասսաները սեփական փորձով համոզվում են պարտիայի լոգունդների ճշտությունը, նրա քաղաքականությունը ճշտությունը:

Իհարկե, ամեն մի այդպիսի դեմոնստրացիա դրա հետ մեկտեղ տալիս էր աչքից թաքնված ուժերի հարաբերակցությունների որոշ լուսաբանում, որոշ հետախուզում, բայց հետախուզությունն այստեղ ոչ թե դեմոնստրացիայի շարժառիթն էր, այլ նրա բնական հետևանքը:

Վերլուծելով հոկտեմբերի ապստամբության նախորդին եղած դեպքերն ու դրանք համեմատելով ապրիլ-հուլիսի դեպքերի հետ՝ Լենինն ասում է.

«Բայց հենց այնպես է, ինչպես էր ապրիլի 20—21-ից, հունիսի 9-ից, հուլիսի 3-ից առաջ, որովհետև այն ժամանակ կար տարերային հարգումն, որը մենք որպես պարտիա կամ չէինք ըմբռնում (ապրիլի 20-ին), կամ հետ էինք պահում ու ձևավորում իբրև խողալ դեմոնստրացիա (հունիսի 9-ին և հուլիսի 3-ին): Որովհետև այն ժամանակ մենք լավ գիտեինք, որ սովետները դեռևս մերը չեն, որ գյուղացիները դեռևս հավատում են լիբերալ-չեքոսլովյան ուղուն, և ոչ թե բոլշևիկյան ուղուն (ապստամբությունը), որ, հետևաբար, ժողովրդի մեծամասնությունը մեր կողմը լինել չի կարող, որ, հետևաբար, ապստամբությունը վաղաժամ է» (տե՛ս 4, XXI, էջ 345):

Պարզ է, որ միմիայն «հետախուզությունը» հեռու դնալ չես կարող:

Իսկ, ակնհայտաբար, «հետախուզությունը» է, այլ այն, որ

1) Հոկտեմբերի նախապատրաստման ամբողջ ժամանակաշրջանում պարտիան իր պայքարի մեջ անշեղորեն հենվում էր մասսայական ուղուցիտն շարժման տարերային վերելքի վրա.

2) հենվելով տարերային վերելքի վրա՝ նա իր ձեռքին էր պահում շարժման անբաժան ղեկավարությունը.

3) շարժման այդպիսի ղեկավարությունը նրա համար հեշտացնում էր Հոկտեմբերյան ապստամբության համար մասսայական քաղաքական բանակ կազմելու դրժը.

4) այդպիսի քաղաքականությունը չէր կարող չհասցնել այն բանին, որ Հոկտեմբերի ամբողջ նախապատրաստումն սեղանի վրա պարտիայի՝ բոլշևիկների պարտիայի ղեկավարությունը.

5) Հոկտեմբերի այդպիսի նախապատրաստումը, իր հերթին, հասցրեց այն բանին, որ Հոկտեմբերյան ապստամբության հետևանքով իշխանությունը գտնվեց Վի պարտիայի, բոլշևիկների պարտիայի ձեռքին:

Այսպես ուրեմն, Վի պարտիայի, կոմունիստների պարտիայի անբաժան ղեկավարությունը, որպես Հոկտեմբերի նախապատրաստման հիմնական մոմենտ, — այս է Հոկտեմբերյան ուղուցիտայի բնորոշ գիծը, այս է բոլշևիկների տակտիկայի առաջին առանձնահատկությունը Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում:

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ առանց բոլշևիկների տակտիկայի այս առանձնահատկության՝ պրոլետարիատի դիկտատուրայի հաղթությունն իմպերիալիզմի պայմաններում անհնարին կլիներ:

Հոկտեմբերյան ուղուցիտն սրանով չահեկանորեն տարբերվում է 1871 թվին Ֆրանսիայում եղած ուղուցիտայից, որտեղ ուղուցիտայի ղեկավարությունը բաժանում էին

իրենց միջև երկու պարտիաներ, որոնցից ոչ մեկը չէ կարող կոմունիստական պարտիա կոչվել:

Երկրորդ առանձնահատկություն: Հոկտեմբերի նախապատրաստութիւնն, այսպիսով, ընթանում էր մի պարտիայի՝ բոլշևիկների պարտիայի ղեկավարութեան ներքո: Բայց պարտիան ի՞նչպէս էր տանում այդ ղեկավարութիւնը, ի՞նչ գծով էր ընթանում այն: Այդ ղեկավարութիւնն ընթանում էր համաձայնողական պարտիաների, որպէս ուժովուցիայի հանգուցալուծման (развязка) ժամանակաշրջանի ամենավտանգավոր խմբավորումների, մեկուսացման գծով, էսերների ու մենշևիկների մեկուսացման գծով:

Ո՞րն է լենինիզմի չիմնական ստրատեգիական կանոնը: Դա ընդունումն է այն բանի, որ

1) ուսուցիչայի թշնամիները ամենից ավելի վտանգավոր սոցիալական հենարանը մոտեցող ուսուցիչին հանգուցալուծման ժամանակաշրջանում համաձայնողական պարտիաներն են.

2) թշնամուն (ցարիզմը կամ բուրժուազիային) անհնարին է տապալել առանց այդ պարտիաների մեկուսացման.

3) ուսուցիչայի նախապատրաստման ժամանակաշրջանում գլխավոր նետերն, այդ պատճառով, պետք է ուղղվեն այդ պարտիաներին մեկուսացնելու կողմը, աշխատավորներին լայն մասսաներին նրանցից կտրելու կողմը:

Յարիզմի դեմ ուղղված պայքարի ժամանակաշրջանում, բուրժուա-դեմոկրատական ուսուցիչայի նախապատրաստման ժամանակաշրջանում (1905—1916) ցարիզմի ամենից ավելի վտանգավոր սոցիալական հենարանը լիբերալ-մոնարխիստական պարտիան էր, կադետների պարտիան: Ինչո՞ւ: Այն պատճառով, որ նա համաձայնողական պարտիա էր, ցարիզմի և ժողովրդի մեծամասնութեան, այսինքն՝ ամբողջութեամբ առած գյուղացիութեան միջև համաձայնութիւն կայացնելու պարտիա: Բնական է, որ պարտիան այն ժամանակ գլխավոր հարվածներն ուղղում էր կադետ-

ների դեմ, որովհետև, կադետներին չմեկուսացնելով՝ չէր կարելի հուսալ, որ գյուղացիութիւնը կխզի իր կապերը ցարիզմից, իսկ այդ խզումը չապահովելով չէր կարելի հուսա դնել ուսուցիչայի հաղթութեան վրա: Այն ժամանակ շատերը չէին հասկանում բոլշևիկյան ստրատեգիայի այս առանձնահատկութիւնը և բոլշևիկներին մեղադրում էին ավելորդ «կադետակերութեան» մեջ՝ պնդելով, որ կադետների դեմ ուղղված պայքարը բոլշևիկների «աչքից ծածկում է» պայքարն ընդդեմ գլխավոր թշնամու, ընդդեմ ցարիզմի: Բայց այդ մեղադրանքները, իրենց ոտքի տակ հող չունենալով, մերկացնում էին բոլշևիկյան ստրատեգիան ուղղակի չըմբռնելը, — ստրատեգիա, որը համաձայնողական պարտիայի մեկուսացումն էր պահանջում նրա համար, որ հեշտացնի, մոտեցնի հաղթութիւնը գլխավոր թշնամու նկատմամբ:

Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, որ առանց այդպիսի ստրատեգիայի՝ պրոլետարիատի հեգեմոնիան բուրժուա-դեմոկրատական ուսուցիչայի մեջ անհնարին կլիներ:

Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում մարտնչող ուժերի ծանրութեան կենտրոնը տեղափոխվեց նոր մակարդակի վրա: Յարն այլևս չկար: Կադետների պարտիան համաձայնողական ուժից փոխարկվեց կառավարող ուժի, իմպերիալիզմի տիրող ուժի: Պայքարն ընթանում էր արդեն ո՛չ թե ցարիզմի ու ժողովրդի միջև, այլ բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև: Այդ ժամանակաշրջանում իմպերիալիզմի ամենից ավելի վտանգավոր սոցիալական հենարան հանդիսանում էին մանր-բուրժուական դեմոկրատական պարտիաները, էսերները ու մենշևիկները պարտիաները: Ինչո՞ւ: Այն պատճառով, որ այդ պարտիաներն այն ժամանակ համաձայնողական պարտիաներ էին, իմպերիալիզմի ու աշխատավոր մասսաների միջև համաձայնութիւն կայացնելու պարտիաներ: Բնական է, որ բոլշևիկների գլխավոր հարվածներն այն ժամանակ ուղղվում էին այդ պարտիաների դեմ, որովհետև առանց այդ

պարտիաների մեկուսացման՝ չէր կարելի հուսալ, թե աշխատավոր մասսաները կխզեն իրենց կապերն իմպերիալիզմի հետ, իսկ առանց այդ խզումն ապահովելու՝ չէր կարելի հուսալ դնել սովետական ռեոլուցիայի հաղթութեան վրա: Այն ժամանակ շատերը չէին հասկանում բոլշևիկյան տակտիկայի այս առանձնահատկութիւնը, բոլշևիկներն մեզաբերելով այն բանում, թե նրանք «ավելորդ ատելութիւն» են տածում դեպի էսերներն ու մենշևիկները և «մոռանում են» գլխավոր նպատակը: Բայց Հոկտեմբերի նախապատրաստման ամբողջ ժամանակաշրջանը պերճախոս կերպով այն է ասում, որ բոլշևիկները միայն «այդպիսի տակտիկայով կարող էին ապահովել Հոկտեմբերյան ռեոլուցիայի հաղթութիւնը»:

Այս ժամանակաշրջանի բնորոշ դիժը գյուղացիութեան աշխատավոր մասսաների հետադառնութիւնն առաջինը է, նրանց հրատարակումը էսերներից ու մենշևիկներից, նրանց հեռանալն այդ պարտիաներից, նրանց շրջադարձը դեպի ռուզակի համախմբումը պրոլետարիատի շուրջը, որպէս միակ մինչև վերջը ռեոլուցիոն ուժի, որն ընդունակ է երկիրը հաշտութեան հասցնելու: Այս ժամանակաշրջանի պատմութիւնը մի կողմից՝ էսերների ու մենշևիկների և մյուս կողմից՝ բոլշևիկների միջև մղվող պայքարի պատմութիւնն է՝ գյուղացիութեան աշխատավոր մասսաների համար, այդ մասսաներին տիրանալու համար: Այդ պայքարի բախտը վճռեցին կոալիցիոն ժամանակաշրջանը, կերենշչինայի ժամանակաշրջանը, էսերների ու մենշևիկների հրաժարվելը կալվածատիրական հողի կոնֆիսկացիայից, էսերների ու մենշևիկների պայքարը պատերազմը շարունակելու համար, հունիսյան հարձակումը Փրոնտում, գլխավորների համար սահմանված մահապատիժը, կոռնիլովյան ապշտամբութիւնը: Եվ այդ բախտը նրանք վճռեցին բացառապէս բոլշևիկյան ստրատեգիայի օգտին: Որովհետև առանց էսերների ու մենշևիկների մեկուսացման՝ անհնարին էր տապալել իմպերիալիստների կառավարութիւնը, իսկ

առանց այդ կառավարութեան տապալման՝ անհնարին էր պատերազմից դուրս պրծնել: Էսերներին ու մենշևիկներին մեկուսացնելու քաղաքականութիւնը միակ ճիշտ քաղաքականութիւնը դուրս եկավ:

Այսպէս ուրեմն, մենշևիկներին ու էսերների պարտիաների մեկուսացումը որպէս Հոկտեմբերի նախապատրաստման գործի ղեկավարութեան հիմնական գիծ, — այս է բոլշևիկների տակտիկայի երկրորդ առանձնահատկութիւնը:

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ առանց բոլշևիկների տակտիկայի այս առանձնահատկութեան՝ բանվոր դասակարգի ու գյուղացիութեան աշխատավոր մասսաների դաշինքն օրի մեջ կախած կմնար:

Բնորոշ է, որ բոլշևիկների տակտիկայի այս առանձնահատկութեան մասին Տրոցկին ոչինչ, կամ գրեթե ոչինչ չի ասում իր «Հոկտեմբերի դասերը» գրվածքում:

Երբորդ առանձնահատկութիւնն է: Հոկտեմբերի նախապատրաստման գործի ղեկավարումը պարտիայի կողմից, այսպիսով, ընթանում էր էսերների ու մենշևիկների պարտիաների մեկուսացման գծով, բանվորների ու գյուղացիների լայն մասսաները նրանցից կտրելու գծով: Բայց պարտիան ի՞նչպէս էր իրականացնում այդ մեկուսացումը կոնկրետ կերպով, ի՞նչ ձևով, ի՞նչ լոզունգով: Այդ իրականացվում էր մասսաների ռեոլուցիոն շարժման ձևով հանուն Սովետների իշխանութեան, «ամբողջ իշխանութիւնը Սովետներին» լոզունգով, Սովետները մասսաների մօրելիցացիայի օրգաններից ապստամբութեան օրգանների, իշխանութեան օրգանների, նոր պրոլետարական պետականութեան ապարատի փոխարկելու համար պայքար մղելու միջոցով:

Ինչո՞ւ բոլշևիկները կառչեցին հատկապէս Սովետներին, որպէս հիմնական կազմակերպական լծակի, որը կարող է հեշտացնել մենշևիկների ու էսերների մեկուսացման գործը, ընդունակ է առաջ շարժելու պրոլետարական ռեոլուցիայի գործը և կոչված է աշխատավորութեան միլիոնավոր մասսաներին հասցնելու պրոլետարիատի դիկտատուրայի հաղթութեանը:

Ի՞նչ են Սովետները:

«Սովետները,—ասում էր Լենինը դեռ 1917 թվի սեպտեմբերին,— նոր պետական ապարատ են, որը տալիս է, նախ՝ բանվորներին ու դուրս- դացիներին զինված ուժ, ըստորում այդ ուժը կտրված է Ժողովրդից, ինչպես Հին մշտական բանակի ուժն էր, այլ ամենասերտ կերպով կապ- ված է նրա հետ. ուղղակի տեսակետից այդ ուժն անհամեմատ ավելի հզոր է, քան նախկինները. ուսուցիչն տեսակետից նա չի կարող փո- խարինվել ոչ մի ուրիշ բանով: Երկրորդ՝ այդ ապարատը տալիս է այնքան սերտ, անխզելի, հեշտ ստուգելի ու վերանորոգելի կապ մասսա- ների հետ, Ժողովրդի մեծամասնության հետ, որ նախկին պետական ապարատում ոչ մի այսպիսի բանի նշույլ անգամ չկա: Երրորդ՝ այս ապարատը—չնորհիվ այն բանի, որ նրա կազմը Ժողովրդի կամքով, առանց բյուրոկրատական ձևականությունների ընտրովի ու փոփոխովի է—չատ ավելի դեմոկրատական է, քան նախկին ապարատները: Չորրորդ՝ այն ամուր կապ է հաստատում ամենաբազմազան պրոֆեսիաների հետ, ղրանով հեշտացնելով ամենախոր բնույթի ամենատարբեր ռեֆորմները զործը՝ առանց բյուրոկրատիայի: Հինգերորդ՝ այն տալիս է ավանդաբ- ղի, այսինքն՝ մեջված դասակարգերի՝ բանվորների ու դյուրացիների՝ ամենազրտակից, ամենաանուղուն, առաջավոր մասի կազմակերպման ձևը, այդպիսով հանդիսանալով մի ապարատ, որի միջոցով ճնշված դասակարգերի ավանդաբղը կարող է բարձրացնել, դաստիարակել, սովու- բեցնել և իր հետևից տանել այդ դասակարգերի ամբողջ վիթխարի մասնամ, որը մինչև այժմ բոլորովին դուրս էր կանգնած եղել քաղա- քական կյանքից, դուրս՝ պատմությունից: Վեցերորդ՝ այն հնարավորու- թյուն է տալիս պառլամենտարիզմի օգուտները միացնելու անմիջական և ուղղակի դեմոկրատիայի օգուտների հետ, այսինքն՝ ի դեմս Ժո- ղովրդի ընտրովի ներկայացուցիչների միացնելու թե՛ օրենսդրական ֆունկցիան, թե՛ օրենսգնդի կատարումը: Բուրժուական պառլամենտու- րիզմի հետ համեմատած՝ սա դեմոկրատիայի զարգացման մեջ այնպիսի մի քայլ է դեպի առաջ, որը համաշխարհային պատմական նշանակու- թյուն ունի... Եթե ուսուցիչն ու դասակարգերի Ժողովրդական ստեղծա- դործությունը Սովետներ—չստեղծեր, ապա պրոլետարական ուսուցիչն ու ստատանում անհուսալի դործ կլիներ, որովհետև պրոլետարիատը հին ապարատով, անտարակույս, իշխանությունն իր ձեռքին պահել չէր կարող, իսկ նոր ապարատ մեկ անգամից ստեղծել չի կարելի» (տե՛ս 4. XXI, էջ 258—259):

Ահա թե ինչու բոլշևիկները կառչեցին Սովետներին, որպես հիմնական կազմակերպական օղակի, որը կարող է հեշտացնել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի կազմակերպումը

և պրոլետարական պետականության նոր հուժկու ապարա- տի ստեղծումը:

«Ամբողջ իշխանությունը Սովետներին» լոգունգն իր ներքին զարգացման տեսակետից անցել է երկու ստադիա— առաջին (մինչև բոլշևիկների հուլիսյան պարտությունը, երկրիշխանության ժամանակ) և երկրորդ (կոռնիլովյան ապստամբության պարտությունից հետո):

Առաջին ստադիայում այդ լոգունգը նշանակում էր կա- դետներին հետ մենչևիկների ու էսերների բլովի խզում, սո- վետական կառավարության կազմավորում մենչևիկներից ու էսերներից (որովհետև Սովետներն այն ժամանակ էսեր—մեն- չևիկյան էին), ազատ ազիտացիայի իրավունք օպոզիցիայի համար (այսինքն՝ բոլշևիկների համար) և պարտիաների հզատ պայքար Սովետների ներսում այն հաշվով, որ այդ- պիսի պայքարի միջոցով բոլշևիկներին կհաջողվի նվաճել Սովետները և ուսուցիչայի խաղաղ զարգացման կարգով փոփոխել սովետական կառավարության կազմը: Այս պլանն, իհարկե, պրոլետարիատի ղեկատարուրա չէր նշանակում: Բայց այն անսարակույս հեշտացնում էր այնպիսի պայ- մանների նախապատրաստումը, որոնք անհրաժեշտ են ղեկ- տատուրան ապահովելու համար, որովհետև այն, իշխա- տությունը գլուխ կանգնեցնելով մենչևիկներին ու էսերներին և հարկադրելով նրանց իրապես անցկացնելու իրենց ան- տիուսուցիչն պատժումը, արագացնում էր այդ պարտիա- ների իսկական բնույթի մերկացումը, արագացնում էր նրանց մեկուսացումը, նրանց կտրվելը մասսաներից: Սա- կայն բոլշևիկների հուլիսյան պարտությունն ընդհատեց այդ զարգացումը՝ ղերակառություն տալով գեներալական- կադետական կոնտրոլուցիային և էսեր—մենչևիկներին վերջինիս ղերկը նետելով: Այս հանգամանքը հարկադրեց պարտիային ժամանակավորապես հերթից հանելու «ամբողջ իշխանությունը Սովետներին» լոգունգն այն հաշվով, որ- պեսպի այդ լոգունգը նորից առաջադրի ուսուցիչայի նոր վերելքի պայմաններում:

Կոռնիլովյան ապստամբութեան պարտութիւնը բացեց երկրորդ ստադիան: «Ամբողջ էշխանութիւնը Սովետներին» լողունգը նորից հերթի դրվեց: Բայց այժմ այս լողունգն արդեն այն չէր նշանակում, ինչ առաջին ստադիայում: Նրա բովանդակութիւնն արմատապես փոխվեց: Այժմ այս լողունգը նշանակում էր կապերի լրակատար լողումն իմպերիալիզմի հետ և էշխանութեան անցումը բուլշևիկներին, որովհետև Սովետներն իրենց մեծամասնութեամբ արդեն բուլշևիկյան էին: Այժմ այս լողունգը նշանակում էր ռեւոլյուցիայի ուղղակի մերձեցում պրոլետարիատի ղեկատարության՝ ապստամբութեան միջոցով: Դեռ ավելին. այժմ այդ լողունգը նշանակում էր պրոլետարիատի ղեկատարության կազմակերպում ու պետական ձևափոխում:

Սովետները պետական էշխանութեան օրգանները վերածելու տակտիկայի անդնահատելի նշանակութիւնն այն էր, որ նա աշխատավորները միլիոնավոր մասսաներին պոկում էր իմպերիալիզմից, ստակաղերժ էր անում որպէս իմպերիալիզմի գործիք՝ մենշևիկներին ու էսերներին պարտիաները և այդ մասսաներին, այսպէս ասած, ուղղակի հաղորդակցութեամբ մոտեցնում էր պրոլետարիատի ղեկատարության:

Այսպէս ուրեմն, Սովետները պետական էշխանութեան օրգանների վերածելու քաղաքականութիւնն, որպէս համաձայնողական պարտիաների մեկուսացման և պրոլետարիատի ղեկատարության հաղթութեան կարևորագույն պայման—այս է բուլշևիկների տակտիկայի երրորդ առանձնահատկութիւնը Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում:

Չորրորդ առանձնահատկութիւն: Պատկերը թերի կլինէր, եթէ մենք չզբաղվէինք այն հարցով, թե բուլշևիկներին ինչպէս և ինչու էր հաջողվում իրենց պարտիական լողունգները դարձնել լողունգներ միլիոնավոր մասսաների համար, որոնք առաջ էին շարժում ռեւոլյուցիան,—թե նրանց ինչպէս և ինչու էր հաջողվում իրենց քաղաքականութեան

ճշտութեանը համոզել բանվոր դասակարգի ո՛չ միայն ավանգարդին և ո՛չ միայն նրա մեծամասնութեանը, այլև ժողովրդի մեծամասնութեանը:

Բանն այն է, որ ռեւոլյուցիայի հաղթութեան համար, եթէ այդ իսկապէս ժողովրդական ռեւոլյուցիա է, որ համակում է միլիոնավոր մասսաներին,—պարտիական լողունգները սոսկ ճշտութիւնը բավական չէ: Ռեւոլյուցիայի հաղթանակի համար մի անհրաժեշտ պայման էլ է պահանջվում, այն է՝ որ մասսաներն իրենք իրենց սեփական փորձով համոզվեն այդ լողունգները ճշտութեանը: Միայն այդ ժամանակ պարտիայի լողունգները դառնում են բուն իսկ մասսաների լողունգներ: Միայն այդ ժամանակ ռեւոլյուցիան դառնում է իսկապէս ժողովրդական ռեւոլյուցիա: Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում բուլշևիկներին տակտիկայի առանձնահատկութիւններից մեկն այն է, որ այդ տակտիկան կարողանում էր ճշտութեամբ որոշել այն ուղիներն ու շրջադարձերը, որոնք մասսաներին բնականորեն մոտեցնում են պարտիայի լողունգներին, ռեւոլյուցիայի, այսպէս ասած, բուն շեմքին, այդպիսով հեշտացնելով նրանց համար այդ լողունգների ճշտութիւնն իրենց սեփական փորձով զգալը, ստուգելը, ճանաչելը: Այլ կերպ ասած՝ բուլշևիկների տակտիկայի առանձնահատկութիւններից մեկն այն է, որ այդ տակտիկան պարտիան ղեկավարելը չի շփոթում մասսաներին ղեկավարելու հետ, որ նա պարզ կերպով տեսնում է առաջին տեսակի ղեկավարման տարբերութիւնը երկրորդ տեսակի ղեկավարումից, որ այդ տակտիկան, այդպիսով, հանդիսանում է ոչ միայն պարտիային ղեկավարելու, այլև աշխատավորների միլիոնավոր մասսաներին ղեկավարելու գիտութիւն:

Բուլշևիկյան տակտիկայի այս առանձնահատկութեան հայտարարման ակնբախ օրինակ է հանդիսանում Սահմանադիր ժողովի գումարման ու ցրման փորձը:

Հայտնի է, որ Սովետների ռեսպուբլիկայի լողունգը բուլշևիկներն առաջադրել են դեռևս 1917 թվի ապրիլին:

Հայտնի է, որ Սահմանադիր ժողովը բուրժուական սրտա-  
լամենտ է, որն արմատապես հակասում է Սովետների ռես-  
պուբլիկայի հիմունքներին: Ի՞նչպես կարող էր պատահել,  
որ բուլճերիները, ընթանալով դեպի Սովետների ռեսպուբ-  
լիկա, դեռահետ մեկտեղ Սահմանադիր ժողովին անհասարակ  
գումարում էին պահանջում ժամանակավոր կառավարու-  
թյունից: Ի՞նչպես կարող էր պատահել, որ բուլճերիները  
ոչ միայն մասնակցեցին ընտրություններին, այլև իրենք  
հրավիրեցին Սահմանադիր ժողովը: Ի՞նչպես կարող էր  
պատահել, որ ապստամբությունից մեկ ամիս առաջ, հնից  
նորին անցնելու պահին, բուլճերիները թուլատրելի էին  
համարում Սովետների ռեսպուբլիկայի ու Սահմանադիր  
ժողովի ժամանակավոր կոմբինացիայի հնարավորությունը:

Իսկ այդ «պատահեց» այն պատճառով, որ

- 1) Սահմանադիր ժողովի դադափարն ամենաժողովրդ-  
դական դադափարներից մեկն էր բնակչության լայն մաս-  
սաներում:
- 2) Սահմանադիր ժողովի անհասարակ գումարման լու-  
գունը հեշտացնում էր ժամանակավոր կառավարության  
կոնտրոլը ցիտոն բնույթի մերկացումը:
- 3) Սահմանադիր ժողովի դադափարը ժողովրդական  
մասսաների աչքում պոսակազերծ անելու համար անհրա-  
ժեշտ էր այդ մասսաներին՝ հողի, հաշտության, Սովետ-  
ների իշխանության իրենց պահանջով հասցնել Սահմանա-  
դիր ժողովի պատերին, այդպիսով նրանց ընդհարելով իս-  
կական և կենդանի Սահմանադիր ժողովի հետ:
- 4) միայն այս կերպ կարելի էր մասսաների համար  
հեշտացնել, որ նրանք սեփական փորձով համոզվեն Սահ-  
մանադիր ժողովի կոնտրոլը ցիտոնությանը և նրա ցրման  
անհրաժեշտությանը:

5) այս ամենը, բնականաբար, ենթադրում էր Սովետ-  
ների Ռեսպուբլիկայի ու Սահմանադիր ժողովի ժամանա-  
կավոր կոմբինացիայի հնարավորության, որպես Սահմա-  
նադիր ժողովի վերացման (изживание) միջոցներից մե-  
կի, թուլատրումը:

6) այդպիսի կոմբինացիան, եթե այն իրականացվե-  
ր ամբողջ իշխանությունը Սովետներին անցնելու դեպքում,  
կարող էր նշանակել միմիայն, որ Սահմանադիր ժողովը  
ենթարկվում էր Սովետներին, որ նա վերածվում էր Սո-  
վետների կցորդի, որ նա անհիմանապես մահանում էր:

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ առանց բուլճե-  
րիների այսպիսի քաղաքականության՝ Սահմանադիր ժո-  
ղովի ցրումն այդպես հարթ չէր անցնի, իսկ էսերներն ու  
մենչեկիներն հետագա ելույթներն «ամբողջ իշխանությունը  
Սահմանադիր ժողովին» լուրջագույն՝ այնպիսի ճայթյունով  
չէին տապալվի:

«Մենք մասնակցեցինք, — ասում է Լենինը, — Ռուսաստանյան բուր-  
ժուական պառլամենտի՝ Սահմանադիր ժողովի ընտրություններին 1917  
թվի սեպտեմբեր—նոյեմբերին: Ճիշտ էր մեր տակտիկան, թե ոչ...  
Սերժո՞ք 1917 թվի սեպտեմբեր—նոյեմբերին մենք, Ռուսական բուլճերի-  
ներս, ավելի իրավունք չունեինք, քան արևմտյան վրեժ երկրի կոմու-  
նիստներ, պառլամենտարիզմը Ռուսաստանում քաղաքականապես վերաց-  
ված (изжит) համարելու: Իհարկե, ունեինք, որովհետև չէ՞ որ բանն  
այն չէ, թե արդյոք բուրժուական պառլամենտները վաղուց է, թե վա-  
ղուց չէ, ինչ դոյություն ունեն, այլ այն, թե աշխատավորների լայն  
մասսաները որքան պարտաստ են (դադափարապես, քաղաքականապես,  
դործնականապես) ընդունելու սովետական հասարակակարգը և ցրելու  
բուրժուա-դեմոկրատական պառլամենտը (կամ թուլատրելու նրա  
ցրումը): Որ 1917 թ. սեպտեմբեր—նոյեմբերին Ռուսաստանում քաղաք-  
ցրումը: Որ 1917 թ. սեպտեմբեր—նոյեմբերին ու դոյուցիները, չնորհիվ մի  
ների բանվոր դասակարգը, ղեկավորներն ու դոյուցիները նախապատրաստված էին  
չարք հատուկ պայմանների, հաղվադեպորեն նախապատրաստված էին  
սովետական հասարակակարգն ընդունելու և ամենադեմոկրատիկ բուր-  
ժուական պառլամենտը ցրելու, այդ միանգամայն անվիճելի ու լիովին  
հաստատված պատմական փաստ է: Եվ այնուամենայնիվ, բուլճերիները  
ո՛չ քն բոյկոտի ենթարկեցին Սահմանադիր ժողովը, այլ մասնակցեցին  
ընտրություններին՝ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանությունը  
նվաճելուց թե՛ առաջ, քե՛ հետո» (տե՛ս հ. XXV, էջ 201—202):

Իսկ ինչո՞ւ նրանք բոյկոտի չենթարկեցին Սահմանա-  
դիր ժողովը: Այն պատճառով, ասում է Լենինը, որ

«Սովետական Ռեսպուբլիկայի հաղթությունից նույնիսկ մի քանի  
շաբաթ առաջ, նույնիսկ այդպիսի հաղթությունից հետո, բուրժուա-  
դեմոկրատական պառլամենտին մասնակցելը ո՛չ միայն չի վնասում ռե-  
պուբլիկան, այլև օգնում է նրան»:

լուցիոն պրոլետարիատին, այլ նրա համար հեշտացնում է հետամնաց մասսաներին այն բանն ապացուցելու հնարավորութունը, թե ինչու այդպիսի պատմամենտներն արժանի են ցրման, հեշտացնում է դրանց ցրման հաջողութունը, հեշտացնում է բուրժուական պառլամենտարիզմի «քաղաքական վերացումը» (տե՛ս նույն տեղում) :

Բնորոշ է, որ Տրոցկին չէ հասկանում բոլշևիկյան տակտիկայի այս առանձնահատկութունը, փոնչացնելով Սահմանադիր ժողովը Սովետներին գուգակցելու «Թեորիա-յի» վրա, որպես հիլֆերդինգականության վրա :

Նա չէ հասկանում, որ այդպիսի գուգակցութուն թույլ տալը—ապստամբության լողունգի և Սովետների հավանա-կան հաղթության դեպքում,—Սահմանադիր ժողովի գու-մարման հետ կապակցված՝ միակ ուսուցիչին տակտիկան է, որն ընդհանուր ոչինչ չունի Սովետները Սահմանադիր ժողովի կցորդի վերածելու հիլֆերդինգյան տակտիկայի հետ, որ միքանի ընկերների սխալն այս հարցում հիմք չի տալիս նրան պարսավելու Լենինի ու պարտիայի միանգա-մայն ճիշտ դերը «կոմբինացված պետականության» նկատմամբ՝ որոշ պայմանների դեպքում (համեմատիր հ. XXI, էջ 338) :

Նա չէ հասկանում, որ առանց բոլշևիկների յուրօրինակ քաղաքականության՝ վերցրած այդ քաղաքականութունը Սահմանադիր ժողովի հարցի կապակցությամբ՝ նրանց չէր հաջողվի իրենց կողմը նվաճել ժողովրդի միլիոնավոր մասսաներին, իսկ այդ մասսաներին չնվաճելով՝ նրանք չէին կարող Հոկտեմբերյան ապստամբութունը ժողովրդ-դական խոր ուսուցիչի վերածել :

Հետաքրքրական է, որ Տրոցկին փոնչացնում է նույ-նիսկ «Ժողովուրդ», «ուսուցիչին դեմոկրատիա» և այլ, բոլշևիկների հողվածներում պատահող, բառերի վրա՝ դրանք մարքսիստի համար անվայել համարելով :

Տրոցկին, ակներևորեն, մոռանում է, որ Լենինը, այդ անտարակուսելի մարքսիստը, նույնիսկ 1917 թվի սեպտեմ-բերին, դեկտատուրայի հաղթութունից մի ամիս առաջ, գրել է «ամբողջ իշխանութունը ուսուցիչին պրոլետարիա-

տի գլխավորած ուսուցիչին դեմոկրատիայի ձեռքն անհա-պաղ անցնելու անհրաժեշտության» մասին (տե՛ս հ. XXI, էջ 198) :

Տրոցկին, ակներևորեն, մոռանում է, որ Լենինը, այդ անտարակուսելի մարքսիստը, կուզելմանին դրած Մարքսի հայտնի նամակից (1871 թվի ապրիլ) ցիտատներ բերելով այն մասին, որ բյուրոկրատական-ազգական պետական ապարատը ջարդելը նախապայմանն է կոնտինենտի ամեն մի իսկական ժողովրդական ուսուցիչի, սպիտակի վրա սևով գրում է հետևյալ տողերը .

«Առանձին ուսուցիչական արժանի է Մարքսի արտախորհ խոր դե-տոդութունը, որ բյուրոկրատական-ազգական պետական մեքենայի խորտակումն «ամեն մի իսկական ժողովրդական ուսուցիչի նախապայ-մանն է» : «Ժողովրդական» ուսուցիչի այս հասկացողութունը տա-բօրինակ է թվում Մարքսի շուրթերում, և ուսական պլեխանովական-ներն ու մենշևիկները, Ստրուվիկի այդ հետևողները, որոնք ցանկանում են մարքսիստ համարվել, կարող էին, թերևս, «լեզվի սխալ» հայտա-բարել Մարքսի այդպիսի արտահայտութունը : Նրանք մարքսիզմը հան-դեցրել են այնպիսի աղբատիկ լիբերալ աղավաղման, որ բացի բուր-ժուական և պրոլետարական ուսուցիչի հակադրումից նրանց համար ոչինչ գոյություն չունի, և այդ հակադրումն էլ նրանք անսահման մե-ռած ձևով են հասկանում... 1871 թվականի Եվրոպայում կոնտինենտի ոչ ուսուցիչ են հասկանում... 1871 թվականի Եվրոպայում կոնտինենտի ոչ մի երկրում պրոլետարիատը ժողովրդի մեծամասնութուն չէր կազմում : «Ժողովրդական» ուսուցիչին, որը շարժման մեջ է ներգաղթում իսկապես մեծամասնությանը, կարող էր այդպիսին լինել թե՛ պրոլետարիատին և թե՛ դյուղացիությանն ընդգրկելով միայն : Այն ժամանակ հենց այդ եր-թե՛ դյուղացիությանն էին, որ կազմում էին «Ժողովուրդը» : Երկու դասա-կու կարգերը միավորված են նրանով, որ «բյուրոկրատական-ազգական պե-տական մեքենան» կեղեքում, ճնշում, շահագործում է նրանց : Փշրել այդ մեքենան, ջարդել այն—այս է «Ժողովրդի», նրա մեծամասնության իսկական շահը, դյուղացիների մեծամասնության ու բանվորների իսկա-կան շահը, այս է չքավորազույն դյուղացիների ու պրոլետարների ազատ դաշինքի «նախապայմանը», իսկ առանց այդպիսի դաշինքի հաստատուն չէ դեմոկրատիան և անհնարին է սոցիալիստական փոխակերպութունը» (տե՛ս հ. XXI, էջ 395—396) :

Լենինի այս խոսքերը մոռանալ չի կարելի : Այսպես ուրեմն, մասսաներին ուսուցիչին դիրքերին մոտեցնելու միջոցով պարտիական լողունգների ճշտության-

նը իրենց սեփական փորձով նրանց համոզել կարողանալը, որպես միլիոնավոր աշխատավորներին պարտիայի կողմը նվաճելու կարևորագույն պայման,— այս է բոլշևիկներին տակալիկայի չորրորդ առանձնահատկությունը Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում:

Ես կարծում եմ, որ ասածս միանգամայն բավական է, որպեսզի կարողանանք պարզել մեզ համար այդ տակալիկայի բնորոշ գծերը:

#### IV

### ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԵՍԱՐ- ՀԱՅԻՆ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ ՍԿԻՋԲ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Անտարակույս է, որ Եվրոպայի հիմնական երկրներում ռևոլյուցիայի միաժամանակյա հաղթությունն ունիվերսալ թեորիան, մի երկրում սոցիալիզմի հաղթության անհնարին լինելու թեորիան արհեստական, անկենսունակ թեորիա դուրս եկավ: Ռուսաստանի պրոլետարական ռևոլյուցիայի յոթնամյա պատմությունը խոսում է ոչ թե հօգուտ այդ թեորիայի, այլ նրա դեմ: Այդ թեորիան անընդունելի է ոչ թե միայն որպես համաշխարհային ռևոլյուցիայի զարգացման սխեմա, որովհետև նա հակասում է ակներև փաստերին: Է՛լ ավելի անընդունելի է այն որպես լոզունգ, որովհետև այն կրականդում է, և ո՛չ թե արձակում առանձին երկրների ձեռներեցությունը, որոնք պատմական որոշ պայմանները չնորհիվ հնարավորություն են ստանում ինքնուրույնաբար ճեղքելու կապիտալի Ֆրոնտը, որովհետև այն խթանում է, ո՛չ թե առանձին երկրների ակտիվ դրոհը կապիտալի վրա, այլ հարցի «ընդհանրական հանդուցալուծման» մոմենտին պասսիվորեն սպասելը, որովհետև առանձին երկրների պրոլետարների մեջ այն պատվաստում է ո՛չ թե ռևոլյուցիոն վճռականության ոգի, այլ համլետյան տարակուսանքների ոգի այն մասին, թե՞ «խիկ եթե հանկարծ ուրիշները չաջակցե՛ն»: Լենինը միանգամայն իրավացի է, ասելով, որ պրոլետարիատի հաղթությունը մի երկրում՝

«տիպիկ դեպք է», որ «միաժամանակյա ռևոլյուցիան մի շարք երկրներում» կարող է միայն «հաղվագյուտ բացառություն» լինել (տե՛ս հ. XXIII, էջ 354):

Բայց ռևոլյուցիայի լենինյան թեորիան չի սահմանափակվում, ինչպես հայտնի է, գործի միայն այս կողմով: Նա դրա հետ մեկտեղ համաշխարհային ռևոլյուցիայի գարգացման թեորիան է<sup>1</sup>: Սոցիալիզմի հաղթությունը մի երկրում ինքնաբավ խնդիր է: Հաղթած երկրի ռևոլյուցիան իրեն պետք է դիտի ոչ թե որպես ինքնաբավ մեծություն, այլ որպես նեցուկ (подспорье), որպես միջոց՝ պրոլետարիատի հաղթությունը բոլոր երկրներում արագացնելու համար: Որովհետև ռևոլյուցիայի հաղթությունը մի երկրում, տվյալ դեպքում՝ Ռուսաստանում, իմպերիալիզմի անհավասարաչափ զարգացման և պրոպրեսիվացող քայքայման արդյունք է միայն: Այն դրա հետ մեկտեղ համաշխարհային ռևոլյուցիայի սկիզբն ու նախադրյալն է:

Անտարակույս է, որ համաշխարհային ռևոլյուցիայի զարգացման ուղիներն այնպես պարզ չեն, ինչպես այդ կալուցի էր թվալ առաջ, մինչև ռևոլյուցիայի հաղթությունը մի երկրում, մինչև զարգացած իմպերիալիզմի երևան գալը, որը «սոցիալիստական ռևոլյուցիայի նախօրյակն է»: Որովհետև երևան է եկել այնպիսի մի նոր Փակտոր, ինչպես տալիստական երկրների անհավասարաչափ զարգացման օրենքն է, որը խոսում է պատերազմական ընդհարումների անխուսափելիության մասին, կապիտալի համաշխարհային Ֆրոնտի ընդհանուր թուլացման և առանձին երկրներում սոցիալիզմի հաղթելու հնարավորության մասին: Որովհետև երևան է եկել այնպիսի մի նոր Փակտոր, ինչպես Արևմուտքի և Արևելքի միջև, աշխարհի Ֆինանսական շահագործման կենտրոնի ու գաղութային ճնշման ասպարեզի միջև ընկած հսկայական Սոյետական երկիրն է, որը սոսկ

<sup>1</sup> Տե՛ս «Լենինիզմի հիմունքների մասին», Ի. Ստ.:



Թած երկրում, որքան ավելի արագ կերպով այդ երկիրը կդառնա համաշխարհային ռեուլուցիայի հետագա ծավալման բազա, իմպերիալիզմի հետագա քայքայման լծակ:

Եթե ճիշտ է այն դրույթը, թե սոցիալիզմի վերջնական հաղթութունն առաջին ազատագրված երկրում անհնարին է առանց միջանկի երկրների պրոլետարների ընդհանուր ջանքերի, ապա նույնքան ճիշտ է նաև այն, որ համաշխարհային ռեուլուցիան կծավալվի այնքան ավելի արագ ու ավելի հիմնավոր կերպով, որքան ավելի իրական կլինի առաջին սոցիալիստական երկրի օգնութունը մնացած բոլոր երկրների բանվորական ու աշխատավորական մասսաներին:

Ինչո՞վ պետք է արտահայտվի այդ օգնութունը:

Այն պետք է արտահայտվի, նախ, նրանով, որ հաղթած երկիրը «կիրառի իրագործելի առավելագույնը մի երկրում՝ զարգացնելու, աջակցելու, արթնացնելու համար ռեուլուցիան բոլոր երկրներում» (տե՛ս Լենին, հ. XXIII, էջ 385):

Երկրորդ, այն պետք է արտահայտվի նրանով, որ մի երկրի «հաղթած պրոլետարիատը», կապիտալիստներին էքսպրոպրիացիայի ենթարկելուց ու իր երկրում սոցիալիստական արտադրութուն կազմակերպելուց հետո ծառանա... մնացած կապիտալիստական աշխարհի դեմ իր կողմը գրավելով մյուս երկրների ճնշված դասակարգերին, այդ երկրներում ապստամբութուն բարձրացնելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտութան դեպքում նույնիսկ ռազմական ուժով դուրս գալով չահագործող դասակարգերի և նրանց պետութունների դեմ» (տե՛ս Լենին, հ. XVІІІ, էջ 232—233):

Հաղթած երկրի կողմից ցույց տրվող այս օգնութունն բնորոշ առանձնահատկութունը միայն այն չէ, որ այդ երկիրն արագացնում է մյուս երկրների պրոլետարների հաղթութունը, այլև այն է, որ հեշտացնելով այդ հաղթութունը, նա դրանով իսկ ապահովում է սոցիալիզմի վերջնական հաղթութունն առաջին հաղթած երկրում:

Ամենից ավելի հավանականն այն է, որ համաշխարհային ռեուլուցիայի զարգացման ընթացքում, առանձին կապիտալիստական երկրներում իմպերիալիզմի օջախների և ամբողջ աշխարհում այդ երկրների սխտեմի կողքին կստեղծվեն սոցիալիզմի օջախներ առանձին սովետական երկրներում և այդ օջախների սխտեմ ամբողջ աշխարհում, ըստորում պայքարն այս երկու սխտեմների միջև կլցնի համաշխարհային ռեուլուցիայի ծավալման պատմութունը:

«Որովհետև,—ասում է Լենինը,—անհնարին է աղբյուրի ազատ միավորումը սոցիալիզմի մեջ՝ առանց սոցիալիստական ռեսուրսների ավելի կամ պակաս երկարատև, համառ պայքարի՝ ընդդեմ հետամնաց պետութունների» (տե՛ս նույն տեղում):

Հոկտեմբերյան ռեուլուցիայի համաշխարհային նշանակութունը ո՛չ միայն այն է, որ նա հանդիսանում է մի երկրի մեծ նախաձեռնութունն իմպերիալիզմի սխտեմի ճեղքման գործում և սոցիալիզմի առաջին օջախը կապիտալիստական երկրների օվկիանոսում, այլև այն, որ նա կազմում է համաշխարհային ռեուլուցիայի առաջին էտապը և նրա հետագա ծավալման հզոր բազան:

Այս պատճառով՝ իրավացի չեն ոչ միայն նրանք, ովքեր մոռանալով Հոկտեմբերյան ռեուլուցիայի միջազգային բնույթը՝ ռեուլուցիայի հաղթութունը մի երկրում հայտարարում են զուտ ազգային և միայն ազգային երևույթ: Իրավացի չեն նաև նրանք, ովքեր հիշելով Հոկտեմբերյան ռեուլուցիայի միջազգային բնույթը՝ հակված են այդ ռեուլուցիան դիտելու որպես ինչ-որ պատսիվ բան, որը կոչված է լոկ աջակցութուն ընդունելու դրսից: Իրապես ոչ միայն Հոկտեմբերյան ռեուլուցիան կարիք ունի մյուս երկրներին ռեուլուցիայի աջակցութանը, այլև այդ երկրներին ռեուլուցիան կարիք ունի Հոկտեմբերյան ռեուլուցիայի աջակցութանը, որպեսզի արագացնի և առաջ շարժի համաշխարհային իմպերիալիզմի տապալման գործը:

17 դեկտեմբերի 1924 թ.:

Հոկտեմբերյան ռեզոլուցիան և ռուսական կոմունիստների տակտիկան

«Հոկտեմբերի ուղիներում» գրքի առաջաբանը . . . . . 3

I. Հոկտեմբերյան ռեզոլուցիայի արտաքին ու ներքին իրադրու-  
թյունը . . . . . 3

II. Հոկտեմբերյան ռեզոլուցիայի երկու առանձնահատկությունների  
մասին, կամ Հոկտեմբերը և Տրոցկու պերմանենտ ռեզոլուցիայի  
թեորիան . . . . . 7

III. Բուլճեիկները տակտիկայի մեքանի առանձնահատկությունների  
մասին Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում 26

IV. Հոկտեմբերյան ռեզոլուցիան վրոպեա համաշխարհային ռեզոլու-  
ցիայի սկիզբը և նախադրյալ . . . . . 42



Խմբագրեցին Օ. Հովհաննիսյան, Ս. Ղեվոնդյան, Տ. Ալեքսանյան  
Տեխնիկական խմբագիր Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Ա. Մանուկյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Հրատարակչության № 851, Պատվեր № 334, заказ № 334  
Տիրաժ 5000, тираж 5000  
Հանձնվել է արտադրության 13/XI 1940 թ.  
Ստորագրված է տպագրելու 6/XII 1940 թ.  
Գինը 90 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,  
Երևան, Ալլանովերդյան № 65  
Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65  
ՎՖ 2087



ԳԻՆԸ 90 Կ.

**И. СТАЛИН**

**ОКтябрьская революция и  
ТАКТИКА РУССКИХ КОММУНИСТОВ**

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1940